



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԶԱՐԳԱՅՐԵՔ ԶԵՐ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ

(Միջին մակարդակ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2021

YEREVAN STATE UNIVERSITY

NARINE GASPARYAN

BRUSH UP YOUR TALK

(Intermediate level)

YEREVAN

YSU PRESS

2021

ՀՏԴ 811.111(075.8)

ԳՄԴ 81.432.1Գ73

Գ 316

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցություն
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:*

Խմբագիր՝ Բ. Գ. Թ., դոցենտ Ա. ԳԱԼՍՅԱՆ

Գրախոս՝ Բ. Գ. Դ., պրոֆեսոր Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գասպարյան Ն.

Գ 316 Ձարգացրեք ձեր բանավոր խոսքը: Ձեռնարկ բուհերի ուսանողների համար/ Ն. Գասպարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 116 էջ:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի՝ անգլերենը որպես երկրորդ մասնագիտություն ուսումնասիրող կամ ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Գիրքը միտված է զարգացնելու ուսանողների հաղորդակցական հմտությունները, ամրապնդելու նրանց գիտելիքները:

ՀՏԴ 811.111(075.8)

ԳՄԴ 81.432.1Գ73

ISBN 978-5-8084-2523-3

© ԵՊՀ հրատ., 2021

© Գասպարյան Ն., 2021

Բովանդակություն/ Content

ԱՌԱՋԱԲԱՆ.....	7
UNIT 1	
Greeting and Introduction	
Ողջունում և ծանոթացում	8
UNIT 2	
Travelling	
Ճանապարհորդություն.....	17
UNIT 3	
Vacation	
Արձակուրդ.....	33
UNIT 4	
In the Town	
Քաղաքում	44
UNIT 5	
At the Restaurant	
Ռեստորանում	52
UNIT 6	
At the Doctor's	
Բժշկի մոտ	64
UNIT 7	
Shopping	
Գնումներ	75
UNIT 8	
Everyday Services	
Կենցաղային ծառայություններ.....	85

UNIT 9

Places of Entertainment, Leisure time

Ժամանցի վայրեր, ազատ ժամանակ95

UNIT 10

Education, Occupation, Job

Կրթություն, զբաղմունք, աշխատանք 104

ԱՌԱՋԱԲԱՆ

Ձեռնարկը նախատեսված է բուհերի՝ անգլերենը որպես երկրորդ օտար լեզու ուսումնասիրող, ինչպես նաև ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Այն միտված է խորացնելու և ամրապնդելու ուսանողների լեզվական գիտելիքները, հարստացնելու նրանց բառապաշարը, զարգացնելու հաղորդակցական հմտությունները բանավոր խոսքում:

Դասագիրքը բաղկացած է տասը թեմատիկ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է երկխոսություններ տարբեր թեմաների շուրջ, որոնց նախորդում են անձանոթ բառերի և արտահայտությունների հայերեն մեկնաբանություններ, իսկ երկխոսություններին հաջորդում են քննարկման տարբեր հարցեր և թեմաներ, որոնք միտված են ակտիվացնելու ուսանողի ստեղծագործական միտքը և հաղորդակցական հմտությունները:

Դաս-բաժինները ներառում են բառապաշարը և խոսքի հմտությունները զարգացնող հետևյալ թեմաները՝ ողջունում և ծանոթացում, ճանապարհորդություն, արձակուրդում, քաղաքում, ռեստորանում, բժշկի մոտ, դեղատանը, ատամնաբուժարանում, գնումներ կատարելիս, ուտելիքներ, վարսավիրանոցում, գեղեցկության սրահում, կենցաղային այլ ծառայություններ, ժամանցի վայրեր, ազատ ժամանակ, կրթություն, զբաղմունք, աշխատանք: Գրքի վերջին հատվածում ինքնակենսագրություն կազմելու և աշխատանքի ընդունվելու համար հարցազրույցի պատրաստվելու ցուցումներ են տրվում սովորողներին երկխոսությունների միջոցով:

Տեքստերը դասակարգված են պարզից բարդ սկզբունքով, բազմաբնույթ են և տեղեկատվական:

UNIT 1

Greeting and Introduction

Ողջունում և ծանոթացում

Useful vocabulary

Օգտակար բառապաշար

department	բաժանմունք
mother-tongue	մայրենի լեզու
foreign language	օտար լեզու
profession	մասնագիտություն
interpreter	թարգմանիչ
to introduce	ներկայացնել
exactly	ճշգրիտ
age	տարիք
parents	ծնողներ
uncle	քեռի, հորեղբայր
mutual friend	ընդհանուր ընկեր
devoted	նվիրված
housewife	տնային տնտեսուհի
well-known	հայտնի
for ages	երկար ժամանակ
to have a lot in common	ընդհանուր շատ բան ունենալ
to catch a train	գնացք նստել
to get to	հասնել
suppose	ենթադրել
generally	ընդհանրապես
describe	նկարագրել
early / late riser	շուտ / ուշ արթնացող
as a rule	որպես կանոն

what's up?
have a lot in common

ի՞նչ նորություն կա
շատ ընդհանրություններ ունենալ

a) Good morning, friends!

Բարի լույս, ընկերներ:

We are all great friends –
Nick, Ann, and me.

I'm sorry, don't you know
Ann? Here she is! Let us speak
to her.

Pete: Hello, Ann! How are
you?

Ann: Hello! Thank you, I'm
well. What about you?

Pete: Thanks. All right. Do
you know my elder brother,
Ann?

Ann: I'm not really sure I do.
Will you describe his
appearance?

Pete: He is rather tall and
dark-eyed boy. He is from
your department.

Ann: Oh, yes, certainly I know
him. How old is he?

Մենք՝ բոլորս՝ Նիքը, Աննան և
ես, լավ ընկերներ ենք:

Կներեք, Դուք Աննային չգի-
տե՞ք: Ահա նա: Եկե՛ք խոսենք
նրա հետ:

Փիթ: Բարև, Աննա՛, ինչպե՞ս
էք:

Աննա: Բարև, շնորհակալու-
թյուն, ես լավ եմ: Իսկ Դո՞ւք:

Փիթ: Շնորհակալություն: Լավ
եմ: Դուք իմ ավագ եղբորը գի-
տե՞ք, Աննա՛:

Աննա: Այնքան էլ համոզված
չեմ, որ գիտեմ: Կնկարագրե՞ք
նրա արտաքինը:

Փիթ: Նա բավականին բարձ-
րահասակ, մուգ աչքերով
տղա է: Նա Ձեր բաժնից է:

Աննա: Օ՛, այո՛, ես հաստատ
նրան գիտեմ: Քանի՞ տարե-
կան է նա:

Pete: He is about 17, but I am not sure I know his age exactly.

Ann: Where were you born?

Pete: I was born in London.

Ann: Would you tell me a little about your family?

Pete: Our family is not large. We are four: my parents, my brother and me.

Ann: What are your parents?

Pete: My father is a doctor. My mother doesn't work, she is a housewife.

Ann: And now let me introduce myself. I'm Ann Anderson and I am a student. I want to become an interpreter. My mother-tongue is English and I am from England. I know many foreign languages, and I think that I'll be a very good interpreter.

Փիթ: Նա մոտավորապես 17 տարեկան է, բայց ես համոզված չեմ, որ ճշգրիտ գիտեմ նրա տարիքը:

Աննա: Դուք որտեղ եք ծնվել:

Փիթ: Ես Լոնդոնում եմ ծնվել:

Աննա: Մի փոքր կպատմե՞ք Ձեր ընտանիքի մասին:

Փիթ: Մեր ընտանիքը մեծ չէ: Մենք չորսն ենք՝ ծնողներս, եղբայրս և ես:

Աննա: Ի՞նչ մասնագիտություն ունեն Ձեր ծնողները:

Փիթ: Հայրս բժիշկ է: Մայրս չի աշխատում. նա տնային տնտեսուհի է:

Աննա: Իսկ հիմա թույլ տվեք ինձ ներկայանալ: Ես Աննա Անդերսոնն եմ, և ես ուսանողուհի եմ: Ես ուզում եմ դառնալ թարգմանչուհի: Իմ մայրենի լեզուն անգլերենն է, ես անգլիացի եմ: Ես շատ օտար լեզուներ գիտեմ և կարծում եմ, որ շատ լավ թարգմանչուհի կդառնամ:

Pete: I am happy to meet you.

Փիթ: Ուրախ եմ Ձեզ հետ ծանոթանալու համար:

Ann: I am sure we'll be very good friends.

Աննա: Համոզված եմ, որ մենք շատ լավ ընկերներ կդառնանք:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. What is your first name?
2. What is your second (family) name?
3. How old are you?
4. Where were you born?
5. What is your profession?
6. Do you know any foreign language?
7. Do you have brothers or sisters?
8. What is their speciality?
9. Do you have a lot in common?
10. Will you tell us about your parents?

b) Let me introduce myself.

Թույլ տվեք ներկայանալ:

Tony: May I introduce myself?

Թոնի: Թույլ տվեք ներկայանալ:

Smith: Of course.

Սմիթ: Իհարկե:

Tony: My name's Tony.

Թոնի: Իմ անունը Թոնի է:

Smith: Just Tony?

Սմիթ: Ուղղակի Թոնի՞:

Tony: Yes, just Tony.

Թոնի: Այո՛, ուղղակի Թոնի:

Smith: Oh, I see. How do you do?

Tony: How do you do? I've wanted to meet you for ages.

Smith: Really? It's fine to meet you now. I've heard a lot about you.

Tony: Oh! I didn't know I was well-known.

Smith: Of course you are. I'm sure we'll have a lot in common.

Tony: Do you think so?

Smith: Oh yes, I'm quite sure. I was talking to a mutual friend recently.

Tony: A mutual friend?

Smith: Yes, Thomas Cook. You do remember him, don't you?

Tony: No, I'm afraid I don't remember Thomas Cook. And his name doesn't mean anything to me.

Սմիթ: Օ՛, լավ: Բարև Ձեզ:

Թոնի: Բարև Ձեզ: Երկար ժամանակ է, որ ցանկացել եմ Ձեզ հանդիպել:

Սմիթ: Իսկապե՞ս: Հիանալի է Ձեզ հանդիպել հիմա: Ես Ձեր մասին շատ եմ լսել:

Թոնի: Օ՛, ես չգիտեի, որ հայտնի եմ:

Սմիթ: Իհարկե, հայտնի եք: Ես համոզված եմ, որ ընդհանուր շատ բան կունենանք:

Թոնի: Դուք այդպե՞ս եք կարծում:

Սմիթ: Այո՛, ես միանգամայն համոզված եմ: Վերջերս խոսում էի մեր ընդհանուր ընկերոջ հետ:

Թոնի: Ընդհանուր ընկերոջ հե՞տ:

Սմիթ: Այո՛, Թոմաս Քուքի: Դուք հիշում եք նրան, այնպես չէ՞:

Թոնի: Ո՛չ, վախենում եմ, որ չեմ հիշում Թոմաս Քուքին: Եվ նրա անունը ինձ ոչինչ չի ասում:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you have many friends?
2. Do you make friends easily?
3. Have you made any friends over the Internet?
4. Do you have any long distance friends?
5. What qualities are important in a friend for you?
6. What quality do you admire most in people?
7. Do you have devoted and reliable friends?
8. Do you trust all of your friends?
9. How many people do you consider your "best friends?"
10. What type of people do you get along with best?

c) I am glad to meet you.

Ուրախ եմ՝ քեզ հանդիպելու
համար:

Ann: Hello, I am glad to meet you. Where have you been all this time? What's up?

Աննա: Բարև, ուրախ եմ՝ քեզ հանդիպելու համար: Որտե՞ղ էիր այս ողջ ժամանակ: Ի՞նչ նորությունն կա:

Bob: Hello, I have been away this summer.

Բոբ: Բարև, այս ամառ այստեղ չէի:

Ann: Well, I know that, but where have you been?

Աննա: Դե, ես դա գիտեմ, բայց որտե՞ղ էիր:

Bob: I visited my uncle in London.

Բոբ: Ես այցելեցի իմ քեռուն Լոնդոնում:

Ann: And how are you getting on?

Աննա: Եվ ինչպե՞ս են գործերդ:

Bob: Everything is all right, thanks.

Ann: You have been ill, haven't you?

Bob: Oh, yes, but I feel quite well now.

Ann: What's the news, Bob?

Bob: No news at all.

Ann: No news is good news, as the English say.

Bob: Oh, they do say so, but is that always right?

Բոբ: Ամեն ինչ լավ է, շնորհակալություն:

Աննա: Դու հիվանդ էիր, այնպես չէ՞:

Բոբ: Օ՛, այո՛, բայց հիմա ինձ միանգամայն լավ եմ զգում:

Աննա: Ի՞նչ նորություն կա, Բոբ:

Բոբ: Ոչ մի նորություն:

Աննա: Ինչպես անգլիացիներն են ասում, լավ լուր է, երբ լուր չկա:

Բոբ: Օ՛, նրանք իսկապես այդպես են ասում, բայց արդյո՞ք դա միշտ ճիշտ է:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you feel happy when you meet your friends?
2. Do you often visit your friends?
3. What do you usually do with your friends?
4. Where do you prefer to meet your friends?
5. What do you talk about when you meet?
6. What things should friends never do?
7. How long have you known your best friend?
8. What topics do you like to discuss?
9. How often do you talk with your friends?
10. Can you describe one of your closest friends?

d) What time do you usually get up?

Ann: What time do you usually get up?

Bob: Generally at about half past seven.

Ann: Why so early? Are you an early riser?

Bob: Because I usually catch an early train up to town.

Ann: Do you always go up by train?

Bob: No, not always.

Ann: How do you get there if you don't go by train?

Bob: By bus or by car.

Ann: When do you get to the office?

Bob: As a rule, about eight o'clock.

Ann: Do you stay in town all day?

Bob: Sometimes I do, sometimes I don't.

Ann: And I suppose you never go

Սովորաբար ժամը քանիսի՞ն էք արթնանում:

Աննա: Սովորաբար ժամը քանիսի՞ն էք արթնանում:

Բոբ: Սովորաբար 7 անց 30-ին:

Աննա: Ինչո՞ւ այդքան վաղ:

Բոբ: Որովհետև ես սովորաբար նստում եմ քաղաք գնացող առավոտյան առաջին գնացքը:

Աննա: Դուք միշտ գնացքո՞վ եք գնում:

Բոբ: Ո՛չ, ոչ միշտ:

Աննա: Եթե գնացքով չէք գնում, ապա ինչպե՞ս եք հասնում այնտեղ:

Բոբ: Ավտոբուսով կամ մեքենայով:

Աննա: Ե՞րբ եք հասնում գրասենյակ:

Բոբ: Որպես կանոն, մոտավորապես ժամը ութին:

Աննա. Դուք ամբո՞ղջ օրն եք մնում քաղաքում:

Բոբ: Երբեմն այո, երբեմն ոչ:

Աննա: Եվ ես ենթադրում եմ, որ

away from home on Sundays.

Bob: When I get home on Saturday afternoon, I stay there till Monday morning.

Ann: What train do you catch?

Bob: I catch the 8.30 train, but if I miss that one, there is another at 8.45.

Դուք տանից երբեք դուրս չեք գալիս կիրակի օրերին:

Բոբ: Երբ ես տուն եմ հասնում շաբաթ կեսօրից հետո, ես մնում եմ այնտեղ մինչև երկուշաբթի առավոտ:

Աննա: Ի՞նչ գնացք եք նստում:

Բոբ: Սովորաբար ես նստում եմ 8.30-ի գնացքը, բայց երբ չեմ հասնում այդ գնացքին, կա մեկ ուրիշը՝ 8.45-ին:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Are you an early or a late riser?
2. Do you use an alarm to wake you up?
3. When do you get up on week-days?
4. Do you eat or drink anything for breakfast?
5. At what time do you leave home?
6. How do you get to the University?
7. How long does it take you to get home?
8. What do you do in the evening?
9. Do you prefer staying up late or going to bed early?
10. Describe your day.

UNIT 2
Travelling
Ճանապարհորդություն
Useful vocabulary
Օգտակար բառապաշար

travel	ճանապարհորդություն (երկա- րատն)
trip	ճանապարհորդություն (կար- ճատն)
journey	ճանապարհորդություն (ցամա- քային)
Voyage	ճանապարհորդություն (ջրային)
to travel on business	ճանապարհորդել գործնական նպատակով
to travel for pleasure	ճանապարհորդել հաճույքի համար
to be on holiday	արձակուրդում լինել
business trip	գործնական ճանապարհորդու- թյուն
excursion	էքսկուրսիա
booking office	տոմսարկղ
timetable	չվացուցակ
single ticket	մեկ ուղղությամբ տոմս
return ticket	երկու ուղղությամբ (վերադար- ձով) տոմս
to book a ticket in advance	նախօրոք տոմս պատվիրել
to make a reservation	տոմս պատվիրել
railway station	երկաթուղային կայարան

sea (river) port
 airport
 passenger
 fast or express train
 goods / freight train
 mail
 plane
 boat
 steamer
 carriage, car
 van
 compartment
 upper (lower) berth
 to pack the things
 suitcase, trunk
 rack
 refreshment room
 to land
 to change the plane
 to have one's luggage registered
 (labelled)
 the train starts for...
 the train is bound for...
 to miss the train
 the train arrives
 the plane takes off

 the train is due in...at...

նավահանգիստ
 օդանավակայան
 ուղևոր
 արագընթաց գնացք
 բեռնատար գնացք
 փոստ
 ինքնաթիռ
 նավակ
 շոգենավ
 վագոն
 ապրանքատար վագոն
 կուպե, գնացքի խցիկ
 վերնի, ներքևի քնատեղ
 իրերը հավաքել
 ճամպրուկ
 դարակ
 հանգստի սենյակ
 վայրէջք կատարել
 ինքնաթիռը փոխել
 բեռը գրանցել տալ

 գնացքը մեկնում է...
 գնացքը ուղևորվում է
 ուշանալ գնացքից
 գնացքը ժամանում է
 ինքնաթիռը մեկնում է/տեղից
 պոկվում է
 գնացքը ժամանում է նշված
 վայրը...նշված ժամանակին...

a) At the Booking-Office

Traveller: Is there a fast train to Glasgow?

Cashier: Yes, there is one. It runs there three times a week. On Monday, Wednesday and Friday.

Traveller: Can I book two tickets in advance?

Cashier: It depends on when you want to start.

Traveller: I want to leave on the 21st.

Cashier: Oh, no mister. There are no tickets left for that date. I can make reservation only for the 23rd.

Traveller: Nothing to be done, I suppose, let it be the 23rd then.

Cashier: What ticket do you want?

Traveller: First class and non-smoking compartment, please.

Տոմսարկղում

Ճանապարհորդ: Գլասգոու մեկնող արագընթաց գնացք կա՞:

Գանձապահ: Այո՛, մեկ գնացք կա: Այն մեկնում է շաբաթը երեք անգամ՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Ճանապարհորդ: Կարո՞ղ եմ ես նախօրոք երկու տոմս պատվիրել:

Գանձապահ: Կախված է նրանից, թե երբ եք ցանկանում մեկնել:

Ճանապարհորդ: Ես ուզում եմ մեկնել 21-ին:

Գանձապահ: Օ՛, ո՛չ, պարո՛ն: Այդ օրվա համար տոմսեր չկան: Ես կարող եմ ամրագրել (նախօրոք պատվիրել) միայն ամսի 23-ի համար:

Ճանապարհորդ: Կարծում եմ՝ ոչինչ հնարավոր չէ անել. թող լինի 23-ին:

Գանձապահ: Ի՞նչ տոմս եք ցանկանում:

Ճանապարհորդ: Առաջին կարգ և չծխողների համար նախատեսված կուպե, խնդրում եմ:

Cashier: Do you prefer upper or lower berths.

Traveller: That's all the same to me after all, but you better give me one lower and one upper berth.

Cashier: Here you are. A lower one and an upper one.

Traveller: How much do they cost?

Cashier: You have to pay 90 dollars for both tickets.

Traveller: Thank you very much.

Cashier: Not at all. Here is your change.

Գանձապահ: Դուք գերադասում եք վերևի, թե՞ ներքևի քնատեղ:

Ճանապարհորդ: Ի վերջո, միևնույն է ինձ համար, բայց ավելի լավ է տվեք ինձ մեկ ներքևի և մեկ վերևի քնատեղ:

Գանձապահ: Ահա խնդրեմ: Մեկ ներքևի և մեկ վերևի տեղ:

Ճանապարհորդ: Որքա՞ն է դրանց արժեքը:

Գանձապահ: Դուք պետք է վճարեք 90 դոլար երկու տոմսի համար:

Ճանապարհորդ: Շատ շնորհակալ եմ:

Գանձապահ: Չարժի: Ահա Ձեր դրամի մնացորդը:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Have you ever travelled by train?
2. Which is your favourite means of transport?
3. How can you make a train reservation?
4. Can you make/cancel a reservation online?
5. Can you change your ticket to another time or date?
6. From what age are train fares payable for children?
7. Can you carry with you small pets in passenger trains?

8. Do you prefer upper or lower berth?
9. What's the best way to travel to long distances? (plane, ship, train, car)
10. Who do you like to travel with?

b) Preparing for a travel

Ճանապարհորդության պատրաստվելիս

Ben: What about the luggage? Is everything packed?

Բեն: Ի՞նչ կասես ճանապարհորդական իրերի մասին: Ամեն ինչ հավաքել է՞ս:

Mary: Oh, no, I haven't finished packing yet.

Մերի: Օ՛հ, ես դեռ չեմ ավարտել իրերս հավաքելը:

Ben: Be quick. It is twenty minutes past one and our train leaves at four. We must arrive at the station at least half an hour before starting time.

Բեն: Արագացրո՛ւ: Մեկն անց քսան րոպե է, իսկ մեր գնացքը մեկնում է ժամը չորսին: Մենք պետք է կայարանում լինենք ամենաուշը գնացքի մեկնելու ժամանակից կես ժամ առաջ:

Mary: Certainly, it is better to be ahead of time than behind it, don't bother, there is very little left to do.

Մերի: Անշուշտ, ավելի լավ է ժամանակից շուտ գնալ, քան ուշ, բայց մի՛ անհանգստացիր, շատ քիչ բան է մնացել անելու:

Ben: So I may hope that we will catch our train, may I not?

Բեն: Ուրեմն կարող եմ հուսալ, որ մեր գնացքին կհասնենք, այնպես չէ՞:

Mary: Be sure we shan't miss our train. You see our suitcases are ready now. Will you help me to lock this one?

Մերի: Համոզվա՛ծ եղիր՝ չենք ուշանա գնացքից: Տեսնում ես՝ մեր ճամպրուկները պատրաստ են: Կօզնե՞ս կողպել այս մեկը:

Ben: With pleasure. I'll press down the lid and you'll lock it. How many pieces of luggage have we?

Mary: All in all two suitcases.

Ben: It seems to me you have taken too many things!

Mary: Oh, no. I haven't taken more than it is absolutely necessary.

Ben: That's all right, we'll see that later.

Mary: Now everything is ready. Look out of the window and see if the taxi is waiting for us.

Ben: Yes, it is. Put on your hat and overcoat and let's go.

Բեն: Միրով: Ես կսեղմեմ կափարիչը, իսկ դու կողպի՛ր այն: Քանի՞ կտոր բեռ ունենք մենք:

Մերի: Բոլորը միասին երկու ճամպրուկ:

Բեն: Ինձ թվում է, որ չափազանց շատ իրեր ես վերցրել:

Մերի: Օ՛, ո՛չ: Ես ավելին չեմ վերցրել, քան այն, որ բացարձակապես անհրաժեշտ է:

Բեն: Լավ, հետո կտեսնենք:

Մերի: Այժմ ամեն ինչ պատրաստ է: Դո՛ւրս նայիր պատուհանից, և տե՛ս՝ արդյոք տաքսին սպասում է մեզ:

Բեն: Այո՛, սպասում է: Դի՛ր գլխարկդ, հագի՛ր վերարկուդ, և արի՛ գնանք:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. How long does it take you to get your things ready?
2. Do you usually travel light or do you have a lot of luggage?
3. What are some things you always take with you on a trip?
4. Do you like to pack a suitcase for travelling?
5. Who packs your things? You or your parents?

6. Do you write a list of things to pack?
7. How often do you forget important things?
8. What do you think of the following advice? "Take half the clothes and twice the money."
9. Who helps you to prepare for a trip?
10. Have you ever lost your luggage?

c) In a Taxi

Տաքսիում

Driver: What station?

Passenger: Victoria station and be quick, please! We are short of time.

Driver: At what time does your train leave?

Passenger: It leaves at four p.m. sharp.

Driver: We have plenty of time then, it's only three.

Passenger: How long will it take us to get there?

Driver: It will take us no more than twenty minutes.

Passenger: But I am still anxious. I am always afraid to miss the train.

Վարորդ: Ո՞ր կայարանը:

Ուղևոր: Վիկտորիա կայարան և արագ, խնդրում եմ: Մենք քիչ ժամանակ ունենք:

Վարորդ: Ժամը քանիսի՞ն է Ձեր գնացքը մեկնում:

Ուղևոր: Այն մեկնում է ցերեկը՝ ուղիղ ժամը չորսին:

Վարորդ: Այդ դեպքում մենք շատ ժամանակ ունենք, դեռ ժամը երեքն է:

Ուղևոր: Որքա՞ն կտևի այնտեղ հասնելը:

Վարորդ: Քսան ռուպեից ավել չի տևի:

Ուղևոր: Բայց ես դեռևս անհանգիստ եմ: Ես միշտ վախենում եմ գնացքից ուշանալ:

Driver: Don't get nervous. We'll be there in no time.

Վարորդ: Մի՛ նյարդայնացեք: Մենք շատ կարճ ժամանակում այնտեղ կլինենք:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. When do you take a taxi?
2. Do you order a taxi by phone or stop it in the street?
3. Is it always easy to order a taxi by phone?
4. Is the traffic heavy during the day?
5. Do you have driver's license? Can you drive a car?
6. How do you travel to work in your country?
7. What do you think of cycling?
8. What transport do you think we'll be using in fifty years time?
9. What unusual means of transport would you like to try out?
10. Speak about the means of traffic in your city (town).

d) At the Railway Station

Կայարանում

Mary: Porter! Porter!

Մերի: Բեռնակի՛ր, բեռնակի՛ր:

Porter: Here I am. What do you want?

Բեռնակիր: Այո՛, ի՞նչ եք ցանկանում:

Mary: Here is our luggage. We want to have these two suitcases labelled, this bag will go with us.

Մերի: Ահա մեր բեռը: Մենք ցանկանում ենք, որ այս երկու ճամպրուկների վրա պիտակներ փակցվեն, այս փոքր պաշուսակը կմնա մեր ձեռքին:

Porter: Very well, I'll do it in a moment. Show me your tickets, please!

Bob: Here they are. Non-smoking carriage number 5, compartment 6, berths 23 and 24.

Porter: That's all right. Where can I find you?

Bob: We'll be waiting for you in the cafe opposite.

Porter: Well, I'll come in a few minutes.

A few minutes later...

Porter: I have registered your suitcases.

Bob: Thank you. Is it time to go to the platform?

Porter: You may go, if you like, the train starts in twenty minutes.

Mary: Oh, we'll go then. Let's hurry. Look here, Bob. Michael is running to us.

Բեռնակիր: Շատ լավ, ես մեկ րոպեում դա կանեմ: Ցոյց տվեք ինձ ձեր տոմսերը, խնդրեմ:

Բոբ: Ահա՛, խնդրեմ: Չծխողների թիվ 5 վագոն՝ կուպե 6, 23 և 24 քնատեղեր:

Բեռնակիր: Շատ լավ: Որտե՞ղ կարող եմ ձեզ գտնել:

Բոբ: Մենք Ձեզ կսպասենք դիմացի սրճարանում:

Բեռնակիր: Լավ, ես մի քանի րոպեից կգամ:

Մի քանի րոպե անց...

Բեռնակիր: Ես գրանցել եմ ձեր ճամպրուկները:

Բոբ: Շնորհակալություն: Կառավարության գնալու ժամանակն է:

Բեռնակիր: Դուք կարող եք գնալ, եթե ցանկանում եք. գնացքը մեկնում է քսան րոպեից:

Մերի: Օ՛հ, այդ դեպքում մենք կգնանք: Շտապե՛նք: Նայի՛ր, Բո՛բ, Մայքլը վազում է դեպի մեզ:

Michael: Hello, here I am, I've come to see you off.

Bob: That's very nice of you.

Michael: Here is a box of sweets and a bunch of flowers for Mary and some magazines and a guide-book for you.

Bob: Thank you, very much. It's very thoughtful of you, I forgot to buy a guide-book and it's such a nuisance to travel without it.

Michael: This is your carriage, isn't it?

Mary: Yes, it is. Bob, let's get in and find the seats.

Bob: These are the seats, I believe. Let me put the suitcase on the rack.

Michael: Is there a dining-carriage in this train?

Mary: Yes there is one, but I don't think we'll need it. We've taken plenty of food from home.

Michael: The train will start in a minute, so I'll get out. Good luck to you! Enjoy yourselves!

Մայքլ: Բարև, ահա և ես: Եկել եմ՝ ձեզ ճանապարհելու:

Բոբ: Դու շատ սիրալիր ես:

Մայքլ: Ահա մի տուփ քաղցրավենիք և մի փունջ ծաղիկներ Մերիի համար, և մի քանի ամսագրեր ու գիրք-ուղեցույց քեզ համար:

Բոբ: Շատ շնորհակալ եմ: Դու շատ հոգատար ես, ես մոռացա գիրք-ուղեցույց գնել, և այնքան անհանգստություն է առանց դրա ճանապարհորդելը:

Մայքլ: Սա ձեր վագոնն է, այնպես չէ՞:

Մերի: Այո՛: Բո՛բ, արի՛ ներս մտնենք և գտնենք մեր տեղերը:

Բոբ: Կարծում եմ, որ սրանք են մեր տեղերը: Թող ճամպրուկը դնեմ դարակում:

Մայքլ: Այս գնացքում կա՞ վագոն-ռեստորան:

Մերի: Այո՛, կա, բայց չեմ կարծում, որ մենք դրա կարիքը կունենանք: Մենք շատ ուտելիք ենք վերցրել տնից:

Մայքլ: Գնացքը կմեկնի մեկ րոպեից, ուստի ես դուրս կգամ: Հաջողություն ձեզ: Հաճելի ժամանց:

Mary and Bob: We wish you a good time too. Thanks for coming to see us off.

Մերի և Բոբ: Մենք նույնպես մաղթում ենք քեզ լավ ժամանակ անցկացնել: Շնորհակալ ենք, որ մեզ ճանապարհելու ես եկել:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Would you like to travel by train at night or during the day?
2. What are the advantages of travelling by train?
3. How important are trains in your country?
4. What do you usually do on a train?
5. Do you like long distance train journeys?
6. Which city has the best subway system?
7. Do you like to travel with your parents?
8. Do you like travelling alone or in group?
9. What are some of the benefits of traveling alone?
10. Do you make friends while you are on vacation?

e) Travelling by Air

Ճանապարհորդել ինքնաթիռով (օդային ճանապարհորդություն)

Steve: Hello, Olivia! How are you?

Մթիվ: Բարև, Օլիվիա, ինչպե՞ս ես:

Olivia: Hello, Steve! And how are you? Is everybody well at home?

Օլիվիա: Բարև, Մթի՛վ, իսկ դու ինչպե՞ս ես: Բոլորը լավ են տանը:

Steve: Thank you, they are all well. Why don't you come and see us?

Olivia: Oh, too busy lately.

Steve: And where are you working now?

Olivia: At an international company. Tomorrow I have to go to Italy.

Steve: By what?

Olivia: I am going to travel by air.

Steve: Oh, that's fine. It saves very much time. This will be the first time you are flying, won't it?

Olivia: Oh, yes. I wonder if I'll enjoy the flight.

Steve: I am sure you will. Don't be nervous, it's very pleasant.

Olivia: I hope everything will be all right.

Steve: Certainly, it will. The weather is fine and you'll have a good flight and arrive safe and

Մթիվ: Շնորհակալ եմ, բոլորը լավ են: Դու ինչո՞ւ չես գալիս՝ մեզ տեսնելու:

Օլիվիա: Շատ զբաղված եմ վերջերս:

Մթիվ: Իսկ որտե՞ղ ես դու հիմա աշխատում:

Օլիվիա: Միջազգային կազմակերպությունում: Վաղը ես ստիպված եմ գնալ Իտալիա:

Մթիվ: Ինչո՞վ ես գնալու:

Օլիվիա: Ես պատրաստվում եմ ինքնաթիռով ճանապարհորդել:

Մթիվ: Օ՛հ, դա հոյակապ է: Այն շատ ժամանակ է խնայում: Սա կլինի քո առաջին թռիչքը, այնպես չէ՞:

Օլիվիա: Օ՛հ, այո՛: Հետաքրքիր է՝ արդյոք թռիչքն ինձ համար հաճելի կլինի:

Մթիվ: Համոզված եմ, այո՛: Մի՛ նյարդայնացիր, դա շատ հաճելի է:

Օլիվիա: Հուսով եմ, որ ամեն ինչ լավ կլինի:

Մթիվ: Անշուշտ, լավ կլինի: Եղանակը հիանալի է, և թռիչքն էլ հաջող կլինի, և դու կժամանես ողջ-առողջ: Ես համոզված

sound. I'm sure, only don't look down, it makes one air-sick. How long does the flight last?

Olivia: It lasts 2 hours.

Steve: How many landings will you have?

Olivia: We shall have only one stop on the way.

Steve: When will the plane take off?

Olivia: The plane takes off at 2p.m. sharp.

Steve: All right. I'll come to see you off and wish you a good flight.

եմ, միայն ցած մի՛ նայիր, այլապես սրտխառնոց կունենաս: Որքա՞ն է տևում թռիչքը:

Օլիվիա: Երկու ժամ է տևում:

Սթիվ: Քանի՞ վայրէջք է լինելու:

Օլիվիա: Մենք միայն մեկ կանգառ ենք ունենալու:

Սթիվ: Ե՞րբ է ինքնաթիռը թռչելու:

Օլիվիա: Ինքնաթիռը մեկնում է ցերեկը ուղիղ ժամը երկուսին:

Սթիվ: Լավ, ես կգամ՝ քեզ ճանապարհելու և հաջող թռիչք մաղթելու:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you like to travel by plane?
2. Are you afraid of flying?
3. Why do some people have the fear of flying?
4. What was the longest flight you have ever taken?
5. Do you like to sit by the window or next to the aisle?
6. Do you agree that air travel is the safest form of travel?
7. How do you like to spend your time during a flight?
8. What do you think of plane food? Do you enjoy eating it?
9. Do you prefer travelling long distances by plane or by train?
10. Where is the best place to buy plane tickets nowadays?

f) On Board the Ship

Ann: Do you like travelling by sea?

Bob: Oh, I am very fond of sea voyages especially when the weather is fine, the sun is shining in the sky and there are no clouds.

Ann: You don't easily get seasick, do you?

Bob: Oh, no, I have been used to the sea since my childhood and I don't mind a little tossing. Where can you get more fresh air and comfort than on board a ship? I stay on deck nearly all the time and I don't go to my cabin except to go to bed.

Ann: Neither do I. Do you happen to know when we are due in Batumi?

Bob: According to the timetable we are due there at noon tomorrow, but I think we are an hour late, aren't we?

Ann: It does not matter, we'll catch it up.

Նավի վրա

Աննա: Դուք սիրո՞ւմ եք ծովով ճանապարհորդել:

Բոբ: Ես շատ եմ սիրում ծովով ճանապարհորդել, հատկապես երբ եղանակը հիանալի է, արևը փայլում է երկնքում, և ամպեր չկան:

Աննա: Դուք սրտխառնոց չե՞ք ունենում, այնպես չէ՞:

Բոբ: Օ՛, ո՛չ, ես ծովին սովոր եմ դեռ մանկուց և դեմ չեմ մի փոքր օրորվել ալիքների վրա: Որտե՞ղ կգտնեք ավելի շատ թարմ օդ և հանգստություն, քան նավի վրա: Ես տախտակամածի վրա եմ մնում համարյա ողջ ժամանակ և իմ նավախուց միայն քնելու եմ գնում:

Աննա: Ես էլ դեմ չեմ: Դուք պատահմամբ չգիտե՞ք՝ երբ ենք հասնելու Բաթում:

Բոբ: Զվացուցակի համաձայն՝ մենք պետք է այնտեղ լինենք վաղը կեսօրին, բայց կարծում եմ մեկ ժամով ուշանում ենք, այնպես չէ՞:

Աննա: Նշանակություն չունի. մենք կհասցնենք:

Bob: The sea has been quite calm since the beginning of the voyage, but I am afraid the night might bring us a storm.

Ann: There is nothing to be afraid of, I'm sure we'll have a good landing tomorrow.

Bob: But look at the sky! It is covered with clouds, and the sea-gulls are beginning to fly very low.

Ann: Don't worry. The wind is beginning to blow, it will blow the clouds away.

Bob: Good night. I am going to my cabin now.

Ann: Sweet dreams! I hope to see you safe and sound in the morning!

Բոբ: Ճանապարհորդության սկզբից ծովը շատ խաղաղ էր, բայց վախենում եմ, որ գիշերը միգուցե փոթորիկ լինի:

Աննա. Վախենալու բան չկա, համոզված եմ, որ վաղը հաջողությամբ ցամաք կիջնենք:

Բոբ: Բայց նայե՛ք երկնքին: Այն ծածկված է ամպերով, և ծովառորները սկսում են թռչել շատ ցածր:

Աննա: Մի՛ անհանգստացեք: Սկսում է քամի փչել. այն ամպերը կքշի:

Բոբ: Բարի գիշեր: Ես հիմա գնում եմ իմ նավախուց:

Աննա: Անուշ երազներ: Հուսամ՝ առավոտյան ողջ-առողջ կտեսնեմ Ձեզ:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Have you ever taken a ship?
2. Do you like to travel by water?
3. What are the advantages of travelling by water?
4. Which way of travelling is more pleasant and more relaxing?
5. Which is the cheapest means of travelling?
6. What activities are available on the ship?

7. If you had a chance where would you like to go by ship?
8. Are there any places you would definitely wish to avoid travelling? Would you like to avoid tourist traps?
9. Do you think that travel broadens the mind? Do you want to be an “armchair traveler”?
10. Speak about the places you have travelled in your own country and abroad.

UNIT 3
Vacation
Արձակուրդ
Useful vocabulary
Օգտակար բառապաշար

summer (winter) vacation	ամառային (ձմեռային) արձակուրդ
to get a package tour	ձեռք բերել ուղեգիր
to take part in an excursion	մասնակցել էքսկուրսիայի
to go to the woods	անտառ գնալ
to gather mushrooms (berries)	հավաքել սունկ (հատապտուղ)
to have a good time	հաճելի ժամանակ անցկացնել
to spend a jolly day (time)	ուրախ օր (ժամանակ) անցկացնել
to join in the fun	միանալ ուրախությանը/խրախճանքին
to enjoy life	վայելել կյանքը
to take sunbath	արևի լոգանք ընդունել
to get sunburnt	արևայրուկ ստանալ
to lie in the sun	պառկել արևի տակ
in the country	քաղաքից դուրս, գյուղում
in town	քաղաքում
above the sea level	ծովի մակարդակից բարձր
seashore	ծովափ
shore of the lake	լճափ
river bank	գետափ
beach	լողափ

spice of danger
common sense

to look fine, healthy, refreshed,
sunburnt

fashionable seaside resort / rest-
house

on one's own

pastime

sleigh

indulge

sprained ankles

mishap

caution

փոքր վտանգ

առողջ միտք (բանականու-
թյուն)

հոյակապ, առողջ, թարմացած,
արևից թխացած տեսք ունենալ

ժամանակակից ծովափնյա
հանգստավայր (առողջարան,
հանգստյան տուն)

ինքնուրույն

հաճելի ժամանց

սահնակ

տարվել

ձգված կոճեր

ձախորդություն

զգուշություն

a) Winter Vacation

Ձմեռային արձակուրդ

George: Hello, Boris! You look fine. Where have you been?

Boris: Hello, George! That's the effect of a fortnight's sun and fresh air in the country.

George: What have you been doing there all this time?

Boris: I spent my winter vacation in the mountains. Don't you remember I offered

Ջորջ: Բարև, Բորի՛ս: Լավ տեսք ունես: Որտե՞ղ ես եղել:

Բորիս: Բարև, Ջո՛րջ: Երկու շաբաթվա գյուղի արևի և թարմ օդի ազդեցությունն է:

Ջորջ: Ի՞նչ էիր անում այնտեղ ողջ ժամանակ:

Բորիս: Ես անցկացրի իմ ձմեռային արձակուրդը լեռներում: Չե՞ս հիշում՝ ես քեզ առաջար-

you to come with me?

George: Yes, I do, but where have you been?

Boris: I've been up in a fashionable seaside resort more than 2000 feet above sea level.

George: You had to go up part of your way by sleigh, I suppose, hadn't you?

Boris: Oh, no, we travelled most of the way by car and only some part on skis. Have you ever been up in the mountains in winter?

George: No, my winter sports were snowballs, sliding, and snow-man building when I was a youngster.

Boris: What! You don't even skate?

George: Only a bit, when the weather permits. The doctor has forbidden me to indulge in sport because of my heart and lungs.

Boris: That's nonsense, I'll

կեցի զալ ինձ հետ:

Ջորջ: Այո՛, հիշում եմ, բայց դու որտե՞ղ ես եղել:

Բորիս: Ես եղել եմ ժամանակակից ծովափնյա հանգստավայրում՝ ավելի քան 2000 ոտնաչափ ծովի մակարդակից բարձր:

Ջորջ: Կարծում եմ՝ դու ստիպված էիր ճանապարհի մի մասը բարձրանալ սահնակով, այնպես չէ՞:

Բորիս: Օհ, ո՛չ, ճանապարհի մեծ մասը մենք անցանք ավտոմեքենայով և միայն որոշ մասը՝ դահուկով: Երբևէ ձմռանը դու եղե՞լ ես լեռներում:

Ջորջ: Ո՛չ, իմ ձմեռային սպորտաձևերը ձնագնդիկներով խաղալն էր, սահնակով սահելը և ձնեմարդ պատրաստելը, երբ ես պատանի էի:

Բորիս: Ի՞նչ, դու նույնիսկ չե՞ս չմշկում:

Ջորջ: Միայն մի փոքր, երբ եղանակը թույլ է տալիս: Բժիշկը արգելել է ինձ տարվել սպորտով սրտիս և թոքերիս պատճառով:

Բորիս: Դա անմտություն է. ես

make a sportsman of you. You simply need some training. Let's go skiing on our next day off. It's a great fun.

George: Isn't it rather dangerous to begin at my age? We often hear of broken legs, sprained ankles, and other mishaps!

Boris: Oh, you may have accident in ski-jumping, I admit. But some people like a spice of danger, and it's not so dangerous after all, if one uses ordinary caution and common sense. You really ought to try it. First, you must get preliminary training in our park and then we shall venture farther.

George: I am too shy to venture it, but I'll think it over. You see, I've always envied

քեզ մարզիկ կդարձնես: Դու պարզապես մի փոքր մարզվելու կարիք ունես: Արի՛ գնանք՝ չմշկելու մեր հաջորդ հանգրստյան օրը: Այն մեծ հաճույք է:

Ջորջ: Արդյո՞ք բավականին վտանգավոր չէ սկսել իմ տարիքում: Մենք հաճախ ենք լսում կոտորված ոտքերի, ձգված կոճերի և այլ ձախորդությունների մասին:

Բորիս: Ես ընդունում եմ, որ դահուկաթռիչքի ժամանակ դու կարող ես վթարի ենթարկվել: Բայց որոշ մարդիկ սիրում են մի փոքր վտանգի ենթարկվել, և ի վերջո, այդքան էլ վտանգավոր չէ, երբ մարդ սովորական զգուշություն և առողջ բանականություն է ցուցաբերում: Դու իսկապես պետք է փորձես: Սկզբում դու պետք է նախապարժանք սկսես մեր այգում, իսկ հետո մենք ռիսկի կդիմենք ու ավելի հեռու կգնանք:

Ջորջ: Ես շատ ամաչկոտ եմ, որ խիզախեմ այդ անել, բայց կմտածեմ այդ մասին: Գիտես՝ ես միշտ նախանձել եմ մար-

sportsmen, they seem to enjoy life and have such a good time. Tell me a little more about yourself. I am sure you had plenty of skating there, too, hadn't you?

Boris: Of course, we had. There's a lake there and all sorts of competitions were held on it. We saw a fine display of figure-skating by experts who were training for the annual championship.

George: And how did you spend your evenings? Too tired to do anything, but go to bed, weren't you?

Boris: My dear fellow, who do you take me for? The evenings were even busier and jollier. There were quite as many girls as boys there, we had concerts and dances almost every evening.

George: Oh, old, chap. I do envy you, you had such a jolly good time there!

գիկներին. թվում է, թե նրանք վայելում են կյանքը և շատ լավ ժամանակ են անցկացնում: Մի փոքր ավելի շատ պատմի՛ր քո մասին: Համոզված եմ, որ այնտեղ նաև շատ ես չմշկել, այնպես չէ՞:

Բորիս: Բիարկե: Այնտեղ մի լիճ կա, և նրա վրա տարատեսակ մրցումներ էին անցկացվում: Մենք տեսանք ձևավոր չմշկասահքի մի հոյակապ կատարում գիտակների կողմից, որոնք վարժվում էին տարվա առաջնության համար:

Ջորջ: Եվ ինչպե՞ս էիր անցկացնում երեկոները: Բացի քնելուց՝ որևէ այլ բան անելու համար շատ հոգնած էիր, այնպես չէ՞:

Բորիս: Իմ սիրելի՛ ընկեր, ո՞ւմ տեղն ես ինձ դրել: Երեկոները նույնիսկ ավելի զբաղված և ուրախ էին: Որքան աղջիկ, այնքան էլ շատ տղա կար այնտեղ, համարյա ամեն երեկո պարեր և համերգներ էին լինում:

Ջորջ: Օ՛, ծերո՛ւկ, ես իսկապես քեզ նախանձում եմ, դու այնքան ուրախ և լավ ժամանակ ես անցկացրել այնտեղ:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. What is winter like in your native country / in your hometown?
2. .What would you change about winter in your country?
3. What memories of winter time from your childhood do you have?
4. What games do you play in winter? What kind of food and drink do you enjoy in winter?
5. Do you think winter feels differently to people of different ages?
6. What are the usual “winter vacation” activities and extraordinary activities?
7. Have you ever travelled in winter? Do you prefer to stay in winter in your own country or go abroad?
8. Have you ever been to rock climbing? If so, describe the experience.
9. Have you ever been lost in the mountains? If so, talk about the experience.
10. What has been the most memorable place you have ever visited in winter?

b) Summer Vacation

Ամառային արձակուրդ

Kate: Hello, Mary! You look splendid: healthy, refreshed and your skin is quite smooth!

Mary: Hello Kate! How are you? You also look fine. Where

Քեյթ: Ողջույն, Մերի՛: Դու հոյակապ տեսք ունես՝ առողջ, թարմացած, և քո մաշկը բավականին հարթ է:

Մերի: Ողջույն, Քե՛յթ: Ինչպես ե՞ս: Դու նույնպես լավ տեսք

have you been? Did you enjoy your summer vacation?

Kate: Oh, yes! I did, I spent a month with my grandparents in the country and then went on an excursion. My grandparents live in a little village, not far from a provincial town. They have a small house there with a lovely garden in front of it. They grow their own flowers and vegetables there. Since my grandparents are rather advanced in age, I helped them with their work in the garden and in the orchard as I do every summer.

Mary: Is their house in a pleasant district? Tell me all about it.

Kate: The house is just outside the village, ten minutes walk from it. There is a nice view of a mountain in front of the house and woods behind it.

Mary: That sounds very nice. Is there a river there?

ունենա: Ո՞ւր էիր գնացել: Վայելեցի՞ր արձակուրդդ:

Քեյթ: Օ՛, այո՛, ես մեկ ամիս անցկացրի իմ տատիկի և պապիկի հետ գյուղում, իսկ հետո գնացի էքսկուրսիա: Իմ տատիկը և պապիկը ապրում են մի փոքրիկ գյուղում՝ գավառական քաղաքից ոչ հեռու: Նրանք այնտեղ փոքր տուն ունեն, առջևում՝ գեղեցիկ պարտեզ: Նրանք իրենց սեփական ծաղիկներն ու բանջարեղենն են աճեցնում այնտեղ: Քանի որ իմ տատիկն ու պապիկը բավականին ծեր են, ես, ինչպես յուրաքանչյուր ամառ, օգնեցի նրանց իրենց աշխատանքում՝ պարտեզում և բանջարանոցում:

Մերի: Նրանց տունը հաճելի՞ վայրում է: Պատմի՛ր ինձ ամեն ինչ այդ մասին:

Քեյթ: Տունը գյուղից դուրս է, տասը րոպեի ոտքի ճանապարհ է: Տան առջև լեռան հաճելի տեսարան կա, իսկ ետևում անտառներ են:

Մերի: Շատ գեղեցիկ է թվում: Այնտեղ գետ կա՞ :

Kate: Certainly there is a river there. I used to bathe there every morning and sometimes we went boating. I like rowing and I am not a bad swimmer, either.

Mary: Did you often go to the woods for mushrooming?

Kate: Oh, yes, we did. There were plenty of mushrooms this summer.

Mary: And what excursions did you go on?

Kate: You see, my cousin has a car and he invited me to accompany him in a motor excursion to Bulgaria.

Mary: That must have been splendid. That's just what I should like. I like fast motoring, sightseeing, happy life, and much fun.

Kate: Look here, motoring is not always much fun. Sometimes we had to stop to make some smaа repairs or to clean our car, we did

Քեյթ: Անշուշտ, այնտեղ գետ կա: Ամեն առավոտ ես լողում էի այնտեղ, իսկ երբեմն մենք գնում էինք՝ նավակով զբոսնելու: Ես սիրում եմ թիավարել և նաև վատ լողորդ չեմ:

Մերի: Դուք հաճախ էիք գնում անտառ սունկ հավաքելու:

Քեյթ: Այո՛, գնում էինք: Այս ամառ շատ սունկ կար:

Մերի: Իսկ ի՞նչ էքսկուրսիա էք գնացել:

Քեյթ: Գիտես՝ իմ զարմիկը մեքենա ունի, և նա ինձ հրավիրեց ընկերակցել իրեն՝ էքսկուրսիա կատարելու դեպի Բուլղարիա:

Մերի: Պետք է որ հոյակապ լիներ: Դա հենց այն է, ինչ ես կուզենայի: Ես սիրում եմ մեքենայով արագ գնալ տեսարժան վայրեր, ուր ուրախ կյանք կա և շատ զվարճանք:

Քեյթ: Լսի՛ր, մեքենա վարելը ոչ միշտ է մեծ զվարճանք: Երբեմն մենք ստիպված էինք կանգ առնել, որպեսզի միասին թերթ վերանորոգում կատարեինք

everything ourselves. But on the whole it was really very interesting for I was abroad for the first time. Well, and what about you? Where and how did you pass the time?

Mary: Oh! I am also pleased with my vacation. You know I am fond of walking and climbing the mountains, especially after having a hard school year, when I am tired of the noisy town with its crowds of people. But to see nothing but trees, mountains and the sea for a long time was too dull for me. I spent a fortnight in the mountains and then I went to Greece, Crete island.

Kate: What extremities! Crete is a fashionable seaside resort, isn't it? Did you enjoy your stay there?

կամ մեր ավտոմեքենան մաքրեինք, մենք ամեն բան ինքներս էինք անում: Բայց, ընդհանուր առմամբ, իսկապես այն շատ հետաքրքիր էր, քանի որ ես առաջին անգամ էի արտասահմանում: Իսկ ի՞նչ կասես քո մասին: Որտե՞ղ և ինչպե՞ս ես քո ժամանակն անցկացրել:

Մերի: Օ՛, ես էլ եմ գոհ իմ արձակուրդից: Գիտես, ես սիրում եմ քայլել, լեռներ բարձրանալ, հատկապես այն բանից հետո, երբ ծանր ուսումնական տարի եմ ունենում, երբ հոգնում եմ բազմամրոխ մարդկանցով լի աղմկոտ քաղաքից: Բայց երկար ժամանակ, բացի ծառերից, սարերից և ծովից, ուրիշ ոչինչ չտեսնելն ինձ համար շատ ձանձրալի էր: Ուստի ես երկու շաբաթ անցկացրի սարերում, իսկ հետո գնացի Հունաստան՝ Կրետե կղզի:

Քեյթ: Ինչպիսի՞ ծայրահեղություններ: Կրետեն ծովափնյա արդի հանգստավայր է, այնպես չէ՞: Այնտեղ մնալը հաճույք պատճառե՞ց քեզ:

Mary: Yes, I did. I stayed in a good rest-house. Every morning I used to go to the seashore to lie in the sun and bathe. I usually stayed on the beach till dinner time. After dinner I had a short rest somewhere in the shade. Sometimes we went motoring, boating or cycling.

Kate: Were there interesting people there?

Mary: Oh, yes, rather. I met some of my friends there and then I made friends with their friends; so had a nice company there. Now I feel rested and ready for work again.

Kate: Come to my place, I'll show you some interesting things I brought from Bulgaria.

Mary: All right. I shall come and you'll tell me everything about your journey.

Kate: That's settled. See you later!

Մերի: Այո՛, ես մնում էի մի լավ հանգստյան տանը: Ամեն առավոտ ես գնում էի ծովափ՝ արևի տակ պառկելու և լողանալու: Սովորաբար մնում էի լողափում մինչև ճաշը: Ճաշից հետո կարճատև հանգստանում էի ինչ-որ մի տեղ՝ ստվերում: Երբեմն գնում էինք՝ ավտոմեքենա վարելու, նավակ կամ հեծանիվ քշելու:

Քեյթ: Հետաքրքիր մարդիկ կայի՞ն այնտեղ:

Մերի: Օ՛, այո՛, անշուշտ: Ես ընկերներիցս ոմանց հանդիպեցի այնտեղ, իսկ հետո ընկերացա նրանց ընկերների հետ, ուստի մի շատ լավ ընկերական շրջապատ ունեինք: Այժմ ես ինձ հանգիստ եմ զգում և կրկին պատրաստ աշխատելու:

Քեյթ: Արի՛ մեր տուն, և ես ցույց կտամ որոշ հետաքրքիր իրեր, որ Բուլղարիայից եմ բերել:

Մերի: Լավ, կգամ, և դու ինձ կպատմես ամեն ինչ քո ճանապարհորդության մասին:

Քեյթ: Որոշված է: Կհանդիպենք ավելի ուշ:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. What countries have you been to?
2. Have you ever visited a European/ an African country?
3. What places/sights are you planning to visit in summer?
4. Have you visited many touristic places/tourist traps in your country?
5. What's the best place for a vacation in your country?
6. Do you like summer or winter vacations?
7. Do you prefer active (visiting new places) or passive (going to a seaside, mountains) way of vacation?
8. Do you prefer package tours or making your own trip?
9. What kind of food and drink do you enjoy in summer during vacation?
10. What's your best / worst summer vacation memory? Tell us about your best vacation.

UNIT 4
In the Town
Քաղաքում
Useful vocabulary
Օգտակար բառապաշար

Square	հրապարակ
to get off/on	իջնել/բարձրանալ (ավտո- բուս)
to get into/out	մտնել/դուրս գալ (տաքսի)
straight	ուղիղ
to take a bus	ավտոբուս նստել
to change the bus	փոխել ավտոբուսը
block	թաղամաս
stop	կանգառ
fare	ուղեվարձ
vacancy	թափուր աշխատատեղ, ազատ տեղ
cancellation	չեղարկում
it's close-by	դա շատ մոտ է
to ask the way	ճանապարհ հարցնել
to lose one's way	ճանապարհը կորցնել (մոլոր- վել)
it is at the corner	այն անկյունում է
the bus is packed	ավտոբուսը լիքն է
to turn to the left/right	թեքվել ձախ/աջ
the traffic is heavy	երթևեկությունը ծանրա- բեռնված է

travel agency	ճանապարհորդական գործակալություն
to reserve/reserved	պատվիրել/պատվիրված
single (one way)/ return ticket	մի ուղղությամբ, առանց հետադարձի (հետադարձով տոմս)
single/double room	մեկտեղանոց/երկտեղանոց սենյակ
registration card	գրանցման թերթիկ
bill	հաշիվ

a) At the Bus Stop

Կանգառում

Peter: Does the bus No 3 stop here?

Պիտեր: Համար 3 ավտոբուսը այստեղ է կանգնում:

Passer-by: Exactly. Here it comes. But it's very packed. Get on. You are in a hurry and I'll wait.

Անցորդ: Ճիշտ այստեղ: Ահա այն գալիս է, բայց շատ լիքն է: Բարձրացե՛ք: Դուք շտապում եք, իսկ ես կսպասեմ:

Peter: I want to go to the museum. Will you tell me where to get off?

Պիտեր: Ես ուզում եմ գնալ թանգարան: Ինձ կասե՛ք, թե որտեղ իջնեմ:

Passer-by: Certainly.

Անցորդ: Անշուշտ:

Peter: Thank you very much.

Պիտեր: Շատ շնորհակալ եմ:

Passer-by: Be careful when you cross the street. The traffic is heavy there.

Անցորդ: Ուշադի՛ր եղեք փողոցն անցնելիս: Երթևեկությունը ծանրաբեռնված է այնտեղ:

Peter: How can I get to the travel agency?

Passer-by: What agency do you mean?

Peter: I want to reserve a ticket to London.

Passer-by: Oh, I see. It's close-by. Go straight along this street. It's only one block and turn to the left. That agency is just at the corner.

Պիտեր: Ինչպե՞ս կարող եմ գնալ ճանապարհորդական գործակալություն:

Անցորդ: Ո՞ր գործակալությունը նկատի ունեք:

Պիտեր: Ես ցանկանում եմ տոմս պատվիրել դեպի Լոնդոն:

Անցորդ: Օ՛հ, հասկացա: Այն շատ մոտ է: Գնացեք ուղիղ այս փողոցով, միայն մեկ թաղամաս և թեքվեք դեպի ձախ: Այդ գործակալությունը հենց անկյունում է:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. How many times have you got lost? What happened?
2. What means of transport do you use most often?
3. How often do you use public transport?
4. Do you think public transport should be free for pensioners/students/children?
5. If you compare bus, trolley-bus and other means of transport in your country – which is the cheapest?
6. Which is the most efficient means of transport?
7. Which is the safest means of transport in terms of accidents?
8. Can you think of any advantages of using public transport as opposed to using your own vehicle, walking or cycling?
9. Are you satisfied with transportation services in your country?

10. Suppose someone stops you in the street and asks the way to the airport. Tell him the shortest way, using landmarks (cinema, metro station, bank, etc.)

b) At the Travel Agency

Ճանապարհորդական գործակալությունում

Peter: I'd like a ticket to London, please.

Պիտեր: Ես տոմս եմ ուզում դեպի Լոնդոն, խնդրում եմ:

Agent: When do you want to fly?

Գործակալ: Ե՞րբ եք ցանկանում թռչել:

Peter: Have you got vacancies on tomorrow's six o'clock plane for London.

Պիտեր: Տոմսեր ունե՞ք վաղը ժամը 6-ին Լոնդոն թռչող ինքնաթիռի համար:

Agent: Sorry, no vacancies.

Գործակալ: Ներեցե՛ք, բոլոր տեղերը վաճառված են:

Peter: But I need a ticket badly, help me, please.

Պիտեր: Բայց ես մեկ տոմսի խիստ կարիք ունեմ, օգնե՛ք ինձ, խնդրում եմ:

Agent: I'll do my best. Wait, please. You are lucky, there are some cancellations for the flight number 569. Would you like a return ticket, sir?

Գործակալ: Հնարավոր ամեն ինչ կանեմ: Սպասեք, խնդրում եմ: Դուք հաջողակ եք. 569 ուղերթի մի քանի չեղարկումներ կան: Պարո՛ն, վերադարձի տոմս կցանկանայի՞ք:

Peter: No, a first-class single ticket, please.

Պիտեր: Ո՛չ, առաջին կարգ և միայն մեկնելու տոմս, խնդրում եմ:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. What are the good and bad things about travelling to a new country?
2. Would you like to go travelling for a few years non-stop?
3. Are you afraid of going abroad alone?
4. What are the advantages and disadvantages of travelling alone or in a group?
5. What is the longest journey you have ever made?
6. What is the best and worst thing about traveling to a new country?
7. If you get lost do you usually try to find out where you are by yourself or do you ask for help?
8. Do you like to go to places where there are lots of other people or to more isolated places? Why?
9. Have you ever had an accident while travelling? What happened?
10. Are you good at reading maps? Do you have any GPS equipment? How does it work?

At the Hotel

Peter: Excuse me, I have reserved a single room for a week.

Administrator: What is your name?

Peter: Pete Dotty.

Հյուրանոցում

Պիտեր: Ներողություն, ես պատվիրել եմ մեկ շաբաթով մեկտեղանոց սենյակ:

Ադմինիստրատոր: Ի՞նչ է Ձեր անունը:

Պիտեր: Պիտեր Դոթի:

Administrator: What kind of room would you like to have?

Peter: I would like to have a room with a bath on the second floor and I would prefer a room facing the park.

Administrator: Here you are, sir. Room 375. Here is the registration card. Fill it in, please. Write your name, nationality and where you have come from. Sign here, please. May I have your passport?

Peter: When can I get my passport back?

Administrator: In a few minutes.

Pete: Please, have my luggage taken up to my room, and show my room.

Administrator: This way, please. Here is the key. Does this room suit you?

Peter: Yes, this room suits me. It's not hot or cold, dark or noisy here.

Ադմինիստրատոր: Ինչպիսի՞ սենյակ կցանկանայիք:

Պիտեր: Կցանկանայի լոգարանով մեկ սենյակ երկրորդ հարկում և կգերադասեի, որ պատուհանները նայեին այգուն:

Ադմինիստրատոր: Խնդրեմ, պարո՛ն, սենյակ համար 375: Ահա գրանցման թերթիկը: Լրացրե՛ք, խնդրեմ: Գրե՛ք Ձեր անունը, ազգությունը և որտեղից եք եկել: Ստորագրե՛ք այստեղ, խնդրում եմ: Կարելի՞ է Ձեր անձնագիրը:

Պիտեր: Ե՞րբ կարող եմ ետ ստանալ իմ անձնագիրը:

Ադմինիստրատոր: Մի քանի րոպեից:

Պիտեր: Խնդրում եմ՝ ուղարկե՛ք ուղեբեռս իմ սենյակ և ցո՛ւյց տվե՛ք իմ սենյակը:

Ադմինիստրատոր: Այս կողմով, խնդրում եմ: Ահա բանալին: Հարմա՞ր է այս սենյակը:

Պիտեր: Այո՛, այս սենյակը ինձ հարմար է: Այստեղ ո՛չ շոգ է և ո՛չ էլ ցուրտ, ո՛չ մութ է և ո՛չ էլ աղմկոտ:

Administrator: May I ask you how long you are planning to stay with us?

Pete: I don't know exactly.

Administrator: Would you mind letting us know the day before you intend to leave? In that case we can have your bill check ready for you.

Administrator: In a minute the porter will take up your things to your room.

Pete: How's the cooking here?

Administrator: There is a good restaurant on the ground floor, to your left, you can get a decent meal there.

Ադմինիստրատոր: Կարո՞ղ եմ իմանալ, թե որքան ժամանակ եք ծրագրում մնալ մեզ մոտ:

Պիտեր: Կոնկրետ չգիտեմ:

Ադմինիստրատոր: Չէի՞ք տեղեկացնի մեզ Ձեր մեկնելուց մեկ օր առաջ: Այդ դեպքում մենք կարող ենք նախօրոք պատրաստել Ձեր հաշիվը:

Ադմինիստրատոր: Մեկ րոպեից բեռնակիրը Ձեր իրերը կբերի սենյակ:

Պիտեր: Ինչպե՞ս են Ձեզ մոտ ուտելիքը պատրաստում:

Ադմինիստրատոր: Առաջին հարկում՝ դեպի ձախ, մի լավ ռեստորան կա, այնտեղ Դուք կարող եք նորմալ սնվել:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you get excited when going on a holiday?
2. Where do you prefer to stay when you go on vacation?
3. Could you live in a hotel for a long time?
4. Are there many hotels in your country? What famous hotels do you know?
5. What activities do you usually do in a hotel?
6. What do you think about hotel food?

7. Do you worry for your belongings when you stay in a hotel?
8. Have you ever spent the night in a tent, ship, train or hotel? Tell us about each place.
9. Which hotel or resort would you recommend in your country? Tell us about them.
10. Describe your best hotel experience.

UNIT 5

At the Restaurant

Ռեստորանում

Useful vocabulary

Օգտակար բառապաշար

canteen	ճաշարան
self-service	ինքնասպասարկում
to be hungry	քաղցած լինել
to be thirsty	ծարավ լինել
to eat, to have a meal	ուտել
to have a bite/snack	մի պատառ ուտել (թեթև նախաճաշել)
breakfast	առաջին նախաճաշ
lunch/brunch	երկրորդ նախաճաշ (1-ին և 2-րդ նախաճաշը միասին)
dinner	ճաշ
supper	ընթրիք
to have breakfast	նախաճաշել
to have dinner; to dine	ճաշել
menu	ճաշացանկ
dish	կերակրատեսակ
a piece of bread	մեկ կտոր հաց
a slice of lemon	մեկ շերտ լիմոն
salt	աղ
sugar	շաքարավազ
lump of sugar	մեկ կտոր շաքար
vinegar	քացախ
tasteless	անհամ

tasty, delicious

roasted

fried

stewed

smoked

boiled

tough

dry

tender

underdone/ well done/

overdone

to lay the table

to pay the bill

to tip the waiter

mustard

pepper

to taste

bitter

sweet

sour

waiter/ waitress

table-cloth

napkin

plate

fork

knife

spoon

glass

համեղ

տապակած (ջեռոցում)

տապակած (կրակի վրա)

շոգեխաշած

ծխեցված

խաշած

կոշտ

չոր

փափուկ

քիչ եփած/ լավ եփած/ շատ ե-

փած

սեղան գցել

հաշիվը փակել

թեյավճար տալ մատուցողին

մանանեխ

պղպեղ

համտեսել

դառը, կծու

քաղցր

թթու

մատուցող/ մատուցողուհի

սեղանի ծածկոց

անձեռոցիկ

ափսե

պատառաքաղ

դանակ

գդալ

բաժակ

saucer
wine-glass
ash-tray
expensive/cheap
mashed potatoes

թելի պնակ, բաժակաման
գինու բաժակ
մոխրաման
թանկ/եժան
կարտոֆիլի պյուրե

a) Breakfast

Նախաճաշ

Ann: What do you drink in the morning, tea or coffee?

Աննա: Ի՞նչ ես խմում առավոտյան՝ թե՞ յ, թե՞ սուրճ:

Kate: I always have tea. What about you?

Քեյթ: Ես միշտ թեյ եմ խմում: Իսկ դո՞ւ:

Ann: No, in the morning I prefer a cup of coffee.

Աննա: Ո՛չ, առավոտյան ես գերադասում եմ մեկ բաժակ սուրճ:

Kate: How much sugar do you put in your coffee?

Քեյթ: Որքա՞ն շաքար ես գցում սուրճի մեջ:

Ann: I usually have my coffee with milk or cream without sugar. Do you drink tea with milk?

Աննա: Սովորաբար ես սուրճը խմում եմ կաթով կամ սերուցքով, առանց շաքարի: Դու թեյը կաթո՞վ ես խմում:

Kate: In the morning I do, but in the afternoon I prefer a glass of strong tea with a slice of lemon.

Քեյթ: Առավոտյան, այո՛, բայց ցերեկը ես գերադասում եմ մեկ բաժակ մուգ թեյ՝ մեկ շերտ լիմոնով:

Ann: What do you eat with your tea?

Աննա: Ի՞նչ ես ուտում թելի հետ:

Kate: Well, I have some bread and cheese or some buttered toast.

Ann: Do you have rich breakfast in the morning?

Kate: Oh, yes, I do. You see, I don't like to have substantial lunch at my office and therefore I usually have either some ham and eggs or some cereal in the morning at home. Sometimes for a change I can have one or two boiled eggs, or a slice of cold meat. I am not very particular about what I eat as long as it is edible.

Քեյթ: Ես ուտում եմ պանիր ու հաց կամ կարմրացրած հաց՝ կարագով:

Աննա: Ճո՞խ ես նախաճաշում առավոտյան:

Քեյթ: Այո՛, գիտես՝ ես չեմ սիրում իմ գրասենյակում կուշտ ուտել, ուստի սովորաբար առավոտյան տանը խոզապուխտով ձվածեղ եմ ուտում կամ հացահատիկային շիլա: Փոփոխության համար երբեմն ուտում եմ մեկ կամ երկու խաշած ձու կամ մեկ կտոր սառը միս: Ես շատ բժախնդիր չեմ ուտելիքի առումով, կարևորը, որ ուտելու համար պիտանի լինի:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you always have time for breakfast?
2. Do you eat much for breakfast?
3. Do you make your own breakfast?
4. Do you prefer to have a big breakfast or a light breakfast? Why?
5. What is a traditional breakfast in your country?
6. Do you have breakfast at fast food restaurants?
7. Do you always have breakfast or do you sometimes skip it?

8. Why is skipping breakfast a bad habit?
9. Why is breakfast considered the most important meal of the day?
10. Speak about traditional English breakfast.

a) Dining at the Restaurant

Ռեստորանում ճաշելիս

Two young men from Scotland – George and Peter were in London. Peter had come to London on a mission, and his friend George was a member of the staff of the Scottish Embassy. They made an appointment for the evening to go to the theatre. It was about six p.m. when they met, and both were rather hungry.

George: Peter, don't you think, it's time to have a bite?

Peter: Well, no, not a bite, but a good meal, I am awfully hungry.

George: All right, I feel just the same as you do. Let's go to some restaurant. By the way,

Շոտլանդացի երկու երիտասարդներ՝ Ջորջը և Պիտերը, Լոնդոնում էին: Պիտերը եկել էր Լոնդոն աշխատանքային հանձնարարությամբ, իսկ նրա ընկերը՝ Ջորջը, Շոտլանդիայի դեսպանատան անձնակազմի անդամ էր: Նրանք պայմանավորվել էին երեկոյան գնալ թատրոն: Մոտավորապես ժամը վեցն էր, երբ նրանք հանդիպեցին, և երկուսն էլ շատ քաղցած էին:

Ջորջ: Պիտեր, չես կարծում, որ ժամանակն է մի փոքր բան ուտենք:

Պիտեր: Ո՛չ, ոչ թե մի փոքր ուտենք, այլ մի լավ ճաշենք. ես սհավոր քաղցած եմ:

Ջորջ: Լավ, ես էլ քեզ պես քաղցած եմ, արի մի որևէ ռեստորան գնանք: Ի դեպ, մեր դես-

there is a good restaurant near our Embassy. You can get a decent meal there and they don't charge very much.

Peter: Lead the way, I'll go wherever you take me for I am quite a stranger here.

George: Very well. Come along.

(The two friends enter a small but attractive restaurant, leave their coats in the cloak-room and enter the hall). They go up to a vacant table and the waiter approaches them.

George: This table isn't reserved, is it?

Waiter: I am sorry, Sir, but it has been reserved by phone.

George: Oh, well, it doesn't matter, we'll sit at another table then. Bring us the menu, please.

Waiter: Here it is, Sir!

պանատան մոտ մի լավ ռեստորան կա: Այնտեղ կարելի է լավ ուտելիք ուտել, և գներն էլ շատ բարձր չեն:

Պիտեր: Առաջնորդի՛ր, ես կգնամ, ուր էլ որ ինձ տանես, քանի որ ես այստեղ անծանոթ եմ:

Ջորջ: Շատ լավ, հետևի՛ր ինձ:

(Երկու ընկերները մտնում են մի փոքր, բայց գրավիչ ռեստորան, թողնում են իրենց վերարկուները հանդերձարանում և մտնում սրահ: Նրանք մոտենում են մի ազատ սեղանի, և մատուցողը մոտենում է նրանց):

Ջորջ: Այս սեղանը նախօրոք պատվիրված չէ, այնպես չէ՞:

Մատուցող: Կներեք, պարո՛ն, բայց այն նախօրոք պատվիրվել է հեռախոսով:

Ջորջ: Դե լավ, խնդիր չէ, այդ դեպքում մենք կնստենք մեկ այլ սեղանի շուրջ: Ճաշացանկը բերեք, խնդրեմ:

Մատուցող: Ահա, խնդրեմ, պարո՛ն:

George: Well, Peter, shall we order expensive or cheap dishes?

Peter: Oh, let's order cheap dishes.

George: Very well, waiter, where is the wine list?

Waiter: Here you are, Sir!

George: Bring us a bottle of claret, please, (turning to Peter) Well, Pete, what will you have?

Peter: I would like some chicken soup, after which fish with mashed potatoes, then some red currant jelly. It is supposed to be a typical English dinner, I believe, isn't it?

George: Well, more or less. I think I'll order the same, only as I am rather fed up with fish, I'll have a beefsteak with fried potatoes and cauliflower instead. And what about dessert?

Ջորջ: Լավ, Պիտեր, մենք թա՞նկ ճաշատեսակներից պատվիրենք, թե՞ էժան:

Պիտեր: Օ՛հ, արի էժան ճաշատեսակներից պատվիրենք:

Ջորջ: Շատ լավ: Մատուցո՛ղ, որտե՞ղ է գինիների ցանկը:

Մատուցող: Ահա, խնդրեմ, պարո՛ւն:

Ջորջ: Բերեք մեզ մեկ շիշ «կլարետ» տեսակի գինի, խնդրեմ (շրջվելով դեպի Պիտերը), Փի՛թ, իսկ դու ի՞նչ կխմես:

Պիտեր: Ես սկզբում կցանկանայի մի քիչ հավով ապուր, որից հետո ձուկ՝ կարտոֆիլի պյուրեով, հետո՝ կարմիր հաղարջով դոնդող: Կարծում եմ՝ սա նման է տիպիկ անգլիական ճաշի, այնպես չէ՞:

Ջորջ: Այո՛, քիչ թե շատ: Կարծում եմ՝ ես էլ նույնը կպատվիրեմ, միայն քանի որ ձկնից կշտացել եմ, ես դրա փոխարեն կվերցնեմ բիֆշտեքս՝ տապակած կարտոֆիլով և ծաղկակաղամբով: Իսկ ի՞նչ կասես աղանդերի մասին:

Peter: Let me see, I think stewed fruit would do me nicely.

George: And the same would do for me.

Waiter: Very well, gentlemen.

(He takes the order and leaves. After a while the dinner is served and they begin to eat.)

George: Well, Pete, how do you like the food here? I hope you are not disappointed.

Peter: On the contrary, I find the fish and the meat which they served us quite delicious, although the vegetables are rather tasteless. They are not to my liking, as there is not enough flavour in them. Pass me the salt, please... Thanks.

George: Not at all. May I ask you for a piece of bread.

Peter: Certainly. Here is the bread tray, help yourself.

George: Thank you.

Պիտեր: Թույլ տուր մտածեմ, կարծում եմ՝ օշարակով միբոքը հարմար է:

Ջորջ: Ինձ համար էլ նույնը լավ է:

Մատուցող: Շատ լավ, պարոնա՛յք:

(Նա ընդունում է պատվերը և հեռանում: Որոշ ժամանակ անց ճաշը մատուցվում է, և նրանք սկսում են ուտել):

Ջորջ: Դե, Փի՛թ, հավանո՞ւմ ես այստեղ մատուցվող կերակուրը: Հույս ունեմ, որ հիասթափված չես:

Պիտեր: Ընդհակառակը, ես գտնում եմ, որ մեզ մատուցված ձուկը և միսը բավականին համեղ են, չնայած բանջարեղենը անհամ է: Այն ինձ դուր չի գալիս, քանի որ քիչ է համեմված: Փոխանցի՛ր ինձ աղը, խնդրեմ... Շնորհակալություն:

Ջորջ: Չարժի: Կարո՞ղ եմ մի կտոր հաց խնդրել:

Պիտեր: Անշուշտ: Ահա հացի սկուտեղը, օգտվի՛ր:

Ջորջ: Շնորհակալություն:

Peter: Don't mention it. Well, I am full. The stewed fruit is not bad. I like it.

George: Well, now, when we are through with our dinner we can order some coffee and have a nice chat.

Peter: Is smoking allowed here?

George: Yes, of course. May I have a cigarette? Mine has run out.

Peter: Certainly.

George: Thanks.

Peter: I suppose, table manners and customs are quite different here from those in other countries. You might give me some hints on what I must be careful.

George: I certainly will. First of all, never sit at the table sideways, always sit facing the table. Don't stretch your feet far out under the table, but try to keep them under your chair. Keep your elbows off the table. And above all, don't talk with

Պիտեր: Չարժի, ես կուշտ եմ: օշարակով միրգը վատը չէ: Այն ինձ դուր է գալիս:

Ջորջ: Այժմ, երբ մենք ավարտեցինք ճաշելը, կարող ենք սուրճ պատվիրել և հաճելի զրույց ունենալ:

Պիտեր: Ծխել թույլատրվո՞ւմ է այստեղ:

Ջորջ: Այո՛, իհարկե: Կարո՞ղ ես ինձ մի ծխախոտ տալ, իմը վերջացել է:

Պիտեր: Անշուշտ:

Ջորջ: Շնորհակալ եմ:

Պիտեր: Կարծում եմ, որ սեղանի շուրջ վարվելաձևը և սովորույթները այստեղ բավականին տարբեր են մյուս երկրներից: Դու պետք է ինձ հուշես ինչից զգուշանալ:

Ջորջ: Անշուշտ: Առաջին հերթին, երբեք մի՛ նստիր սեղանի շուրջ մի կողմ թեքված, միշտ նստի՛ր դեմքով դեպի սեղանը: Ոտքերը հեռու մի՛ տարածիր սեղանի տակ, այլ պահի՛ր քո աթոռի տակ: Արմունկները սեղանից հեռու՛ պահիր, և ամենակարևորը մի՛ խոսիր բե-

your mouth full. Chew and swallow your food first, and then talk. Don't use a spoon for what can be eaten with a fork. Remember, the forks are placed in the order in which they are to be used (salad fork, fish fork, meat fork, etc.) and never forget to say "thank you" for every favour or kindness shown to you. Then don't turn your back to one person for the purpose of talking to another. Don't forget that the woman sitting next to you should not be neglected, however old or unattractive she may be.

Peter: Well, that's very instructive. Thank you very much. But don't you think that, as a rule, we observe the same manners in our country, too.

բանդ ուտելիքով լիքը: Առաջին հերթին ծամի՛ր և կո՛ւլ տուր ուտելիքը, հետո խոսի՛ր: Մի՛ օգտագործիր գդալ այն ուտելիքի համար, որը կարելի է ուտել պատառաքաղով: Հիշի՛ր՝ պատառաքաղները դասավորված են այն հերթականությամբ, ըստ որի՝ պետք է գործածվեն (աղցանի պատառաքաղ, ձկան, մսի և այլն), և երբեք մի՛ մոռացիր ասել շնորհակալություն քո նկատմամբ ցուցաբերած յուրաքանչյուր օգնության կամ սիրալիրության համար: Մեղանի շուրջ մեջք մի՛ դարձրու մեկին՝ մյուսի հետ զրուցելու համար: Մի՛ մոռացիր, որ կողքիդ նստած կինը չպետք է անուշադրության մատնվի քո կողմից՝ անկախ նրա գրավչությունից և տարիքից:

Պիտեր: Դա շատ ուսուցողական է, շատ շնորհակալ եմ: Բայց չե՞ս կարծում, որ, որպես կանոն, մենք մեր երկրում նույնպես պահպանում ենք նման վարվելակերպ:

George: I suppose we do. One more point. Don't fail to rise when the ladies leave the table. Remain standing until they have left the room and only then sit down again. Well, Peter I think it's time to make a move, or else we'll be late for the theatre.

(to the waiter) Let's have the bill, please.

Waiter: Here it is, gentleman. (They pay the bill, tip the waiter, get their coats from the cloak-room and leave the restaurant.)

Ջորջ: Կարծում եմ, այո՛: Մի բան ևս, մի՛ մոռացիր վեր կենալ, երբ կանայք հեռանում են սեղանից: Մնա կանգնած, մինչև նրանք սենյակից դուրս գան, և միայն դրանից հետո կրկին նստիր: Պի՛տեր, կարծում եմ՝ ժամանակն է գնալ, այլապես կուշանանք թատրոնից:

(մատուցողին) Հաշիվը, խնդրեմ:

Մատուցող: Ահա, պարոնայք: (Նրանք վճարում են հաշիվը, թեյավճար տալիս մատուցողին, վերցնում իրենց վերարկուները հանդերձարանից և հեռանում ռեստորանից):

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you like to dine at home or at a restaurant?
2. Which is your favourite dish?
3. What kind of food and drink do you generally enjoy?
4. Are you a good cook and do you like eating dishes that you cook?
5. What cafes and restaurants do you know in your city (town)?
6. Do you eat out or do you like takeaway when you're on holiday?

7. Do you like to try local dishes or do you stick to "international" dishes like pizza, hamburgers, and so on?
8. Do you eat more when you're on holiday? Do you put on weight or do you work it all off?
9. Do you have a preferable place to spend time?
10. Describe the place that you like most of all.

UNIT 6
At the Doctor's
Բժշկի մոտ
Useful vocabulary

patient – հիվանդ	illness – հիվանդություն
ointment – քունք	thermometer – ջերմաչափ
drops – կաթիլներ	physician – թերապևտ
pills – հաբեր	surgeon – վիրաբույժ
powder – փոշի	dentist – ատամնաբույժ
liquid – հեղուկ	breath – շունչ
toothpaste – ատամի մածուկ	cough – հազ
tooth brush – ատամի խոզանակ	food-poisoning – սննդային թունավորում
headache – գլխացավ	insomnia – անքնություն
pneumonia – թոքաբորբ	filling – պլոմբ
influenza – գրիպ	cavity – խոռոչ
bleeding – արյունահոսություն	to pull the tooth – հանել ատամը
blood-pressure – արյան ճնշում	crown – շապիկ
rheumatism – ռևմատիզմ	injection – ներարկում, սրսկում
fever – տենդ	X-rays – ռենտգենյան ճառագայթներ
mumps – խոզուկ	permanent – մշտական
cancer – քաղցկեղ	temporary – ժամանակավոր
sore-throat – կոկորդացավ	nutrition/nutritional – սնունդ/սննդարար
heart-disease – սրտային հիվանդություն	
infectious disease – վարակիչ հիվանդություն	

chemist's – դեղատոն
medication – դեղորայք

inflammation – բորբոքում

a) At the Doctor's Office

Receptionist: Good morning.
Can I help you?

Patient: Good morning. My
name is Nick. I have an
appointment with a physician
at 11 o'clock.

Receptionist: Please, take a
seat. The doctor will see you
soon.

Doctor: Hello, Nick. Come in,
please. Sorry to have kept you
waiting. What is troubling
you?

Patient: I've caught a cold. I
have a sore throat and a bad
cough.

Doctor: Put this thermometer.
I want to see if you have a
fever. Let me see. Yes, you
have a temperature. When did
you feel ill?

Patient: A couple of days ago.

Doctor: Let me examine you.

Բժշկի գրասենյակում

Բուժքույր: Բարի առավոտ: Կա-
րո՞ղ եմ օգտակար լինել:

Հիվանդ: Բարի առավոտ: Իմ ա-
նունը Նիք է: Ես պայմանավոր-
վածություն ունեմ բժշկի հետ
ժամը 11-ին:

Բուժքույր: Նստե՛ք, խնդրեմ:
Բժիշկը շուտով կնայի Ձեզ:

Բժիշկ: Ողջույն, Նի՛ք: Նե՛րս ե-
կեք, խնդրեմ: Կներեք, որ սպա-
սեցրել եմ Ձեզ: Ի՞նչն է Ձեզ ան-
հանգստացնում:

Հիվանդ: Ես մրսել եմ: Կոկորդս
ցավում է, և ուժեղ հազում եմ:

Բժիշկ: Դրե՛ք այս ջերմաչափը,
ուզում եմ տեսնել՝ արդյոք ջեր-
մություն ունեք: Տեսնենք: Այո՛,
Դուք ջերմություն ունեք: Ե՞րբ
էք Ձեզ վատ զգացել:

Հիվանդ: Մի քանի օր առաջ:

Բժիշկ: Թո՛ւյլ տվեք զննել Ձեզ:

Take a deep breath. Now I want to test your blood pressure. It is slightly above normal, but there is nothing to worry about. Any other trouble?

Patient: Doctor, I haven't been sleeping well. I am very nervous.

Doctor: Try to stop smoking. Do daily exercises. You have insomnia.

Patient: Shall I have to go to hospital?

Doctor: No, I'll give you a prescription. Take the first one only once at bedtime, it is a sleeping pill, take the other one three times a day, it is for your flue. You must stay in bed for several days until your temperature has gone down. Come again to see me in five days.

Patient: Thank you, doctor.

Խորը շունչ քաշեք: Այժմ ես ուզում եմ չափել Ձեր արյան ճնշումը: Այն մի քիչ նորմալից բարձր է, բայց անհանգստանալու ոչինչ չկա: Էլ ի՞նչն է անհանգստացնում Ձեզ:

Հիվանդ: Բժիշկ, ես վատ եմ քնում: Ես շատ նյարդային եմ:

Բժիշկ: Փորձե՛ք ծխելը թողնել: Կատարե՛ք ամենօրյա մարմնամարզություն: Դուք անքնություն եք տառապում:

Հիվանդ: Պետք է հիվանդանոց գնամ:

Բժիշկ: Ո՛չ, ես դեղատոմս կգրեմ: Առաջինը կիսմեք օրական մեկ անգամ քնելուց առաջ. դա քնաբեր է, իսկ մյուսը խմեք օրական երեք անգամ. դրանք գրիպի դեմ են: Դուք պետք է անկողնում մնաք, մինչև Ձեր ջերմությունն իջնի: Նորից եկե՛ք ինձ մոտ հինգ օրից:

Հիվանդ: Շնորհակալություն, բժիշկ:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. Do you see a doctor when you catch a cold?
2. Do you stay in bed when you have a temperature?
3. Do you strictly follow the doctor's advice?
4. Do you take medicine when you are ill?
5. Do you have medical insurance?
6. Do you have your family doctor?
7. What disease frightens you the most?
8. What are the most important qualities of a doctor?
9. What medical services are free of charge in your country?
10. What are some things people can do to keep healthy?

b) At the Dentist's

Ատամնաբուժարանում

Patient: Hello, I have an appointment with the dentist at 2 o'clock.

Receptionist: Have a seat, please. The doctor will see you soon.

Patient: Thank you.

Doctor: Hello, Mr. Smith. Come in, please. Sit down.

(Mr. Smith is sitting down in the dentist's chair)

Doctor: What is the problem?

Patient: I have a toothache on the left upper side.

Հիվանդ: Ողջույն: Ես ատամնաբույժի հետ պայմանավորվածություն ունեմ ժամը 2-ին:

Բուժքույր: Նստե՛ք, խնդրեմ: Բժիշկը Ձեզ շուտով կնայի:

Հիվանդ: Շնորհակալություն:

Բժիշկ: Ողջույն, պարո՛ւն Սմիթ: Նե՛րս եկեք, խնդրեմ: Նստե՛ք:

(Պարոն Սմիթը նստում է ատամնաբույժի արձողին)

Բժիշկ: Ի՞նչ խնդիր ունեք:

Հիվանդ: Ես ատամնացավ ունեմ ձախ կողմում՝ վերնից:

Doctor: How long have you had it?

Patient: For about 3 days. I have a filling, but it is loose. I'm afraid it is about to drop out.

Doctor: Let me have a look at it. Open your mouth wide, please. I'll take an X-ray.

Patient: Good.

Doctor: There is a rather deep cavity on the right side of the tooth.

Patient: Will you have to pull the tooth?

Doctor: No, I hope to save your tooth. I'll give you an injection of painkiller, Novocaine.

Patient: Okay.

Doctor: ... Now, I can drill your tooth. You don't feel any pain, do you?

Patient: No, I don't.

Doctor: I would suggest that besides the usual filling we put a crown on your tooth. That can save it. I'll put a temporary

Բժիշկ: Որքա՞ն ժամանակ է, որ ատամնացավ ունեք:

Հիվանդ: Մոտ երեք օր: Ատամս պլոմբած է, բայց պլոմբը թուլացած է: Վախենում եմ՝ այն ընկնի:

Բժիշկ: Թույլ տվեք նայել: Լայն բացե՛ք բերանը, խնդրում եմ: Ես ռենտգեն կանեմ:

Հիվանդ: Լավ:

Բժիշկ: Ատամի աջ կողմում բավականին խորը խռոչ կա:

Հիվանդ: Ստիպված եք հանե՞լ ատամը:

Բժիշկ: Ո՛չ, ես հույս ունեմ փրկել Ձեր ատամը: Ես Ձեզ ցավազրկող՝ Նովոկային կնե-րարկեմ:

Հիվանդ: Լավ:

Բժիշկ: ... Այժմ ես կարող եմ ծակել (փորել) Ձեր ատամը: Ցավ չեք զգում, չե՞:

Հիվանդ: Ո՛չ, չեմ զգում:

Բժիշկ: Ես Ձեզ կառաջարկեի, որ բացի սովորական պլոմբից՝ շապիկ դնեի՞նք ատամին: Դա կարող է փրկել ատամը: Ես այ-

crown there today. The permanent crown will be ready in about 10 days. Then you'll come back. Is it all right?

Patient: I know that a crown is very expensive but I have no other way, I agree.

Doctor: Now I'm doing a root canal. Does it hurt?

Patient: A bit.

Doctor: ...I'm finishing. You can eat in an hour. See my nurse for the next appointment.

սօր կոնեն ժամանակավոր շապիկ: Մշտական շապիկը պատրաստ կլինի 10 օրից: Դուք այդ ժամանակ կգաք, լա՞վ:

Հիվանդ: Ես գիտեմ, որ շապիկը շատ թանկ է, բայց ես այլ տարբերակ չունեմ, համաձայն եմ:

Բժիշկ: Հիմա ես նյարդն եմ հեռացնում: Ցավո՞ւմ է:

Հիվանդ: Մի քիչ:

Բժիշկ: ...Վերջացնում եմ: Դուք կարող եք մեկ ժամից ուտել: Մոտեցե՛ք իմ բուժքրոջը՝ հաջորդ հանդիպումը գրանցելու համար:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. How often do you see a dentist?
2. When was the last time you went to a dentist?
3. What do you do when you have a toothache?
4. How often do you brush your teeth?
5. Are you afraid of pulling a tooth?
6. Do you have crowns on your teeth?
7. Do you have fillings in your teeth?
8. Do you have missing teeth?

9. Will you risk placing dental implants?
 10. Is dentistry expensive in your country?

c) At the Chemist's

Դեղատանը

Passer-by A: Would you please tell me, where is the nearest chemist's?

Անցորդ Ա: Խնդրում եմ, կասե՞ք՝ որտեղ է մոտակա դեղատունը:

Passer-by B: Go straight, then turn to the left.

Անցորդ Բ: Ուղիղ գնացեք, հետո ձախ թեքվեք:

Passer-by A: Thank you. ...

Անցորդ Ա: Շնորհակալություն:
 ...

(at the chemist's)

(դեղատանը)

Customer: Can I get a medicine with this prescription?

Հաճախորդ: Կարո՞ղ եմ այս դեղատոմսով դեղ վերցնել:

Pharmacist: Just a minute. I'll check if we have this in stock ... I'm sorry, we have to order it, as it is out of stock. It will be ready in 2 hours. Does it suit you?

Դեղագետ: Մի րոպե ես կստուգեմ, թե մենք դա ունենք վաճառքում... Կներեք, մենք պետք է պատվիրենք, քանի որ այն վաճառված է: Այն երկու ժամից պատրաստ կլինի: Հարմա՞ր է:

Customer: Yes, of course. Shall I pay now or later?

Հաճախորդ: Այո՛, իհարկե: Հիմա՞ վճարեմ, թե՞ հետո:

Pharmacist: No, you needn't pay for it now.

Դեղագետ: Ո՛չ, հիմա վճարելու կարիք չկա դրա համար:

Customer: Do you have anything for a headache and a toothache?

Հաճախորդ: Դուք գլխացավի և ատամնացավի դեմ որևէ բան ունե՞ք:

Pharmacist: I would recommend you Tylenol. It's for temporary relief of minor pain.

Customer: Don't you have a painkiller?

Pharmacist: Without a doctor's prescription we can't give you.

Customer: Okay. In that case give me, please, a bandage, some iodine, a thermometer and Tylenol.

Pharmacist: Here you are.

Customer: How much shall I pay?

Pharmacist: 10 dollars.

Customer: Thank you.

Դեղագետ: Ես Ձեզ կառաջարկեմ Տիլենոլ: Դա ժամանակավոր կմեղմացնի թեթև ցավը:

Հաճախորդ: Չունե՞ք ավելի ուժեղ ցավազրկող:

Դեղագետ: Առանց բժշկի դեղատոմսի չենք կարող տալ:

Հաճախորդ: Լավ: Այդ դեպքում, խնդրում եմ, տվե՞ք բինտ (փաթաթան), յոդ, ջերմաչափ և Տիլենոլ:

Դեղագետ: Խնդրեմ:

Հաճախորդ: Որքա՞ն պետք է վճարեմ:

Դեղագետ: 10 դոլար:

Հաճախորդ: Շնորհակալություն:

Questions for discussion

Հարցեր քննարկման համար

1. What do you do when you have a headache or a toothache?
2. Do you like to take medicine?
3. Do you use natural methods to relieve pain?
4. Do you have allergy from medications?
5. What non-prescription medications do you take?

d) Discussing Nutrition Problems

Nick: I've been living in America for more than seven years, but I don't yet understand why there is so much talk about nutrition as a growing science.

Tom: Americans want to be healthy. But most of us have no understanding of nutrition problems.

Nick: Whenever I see my family doctor, he advises me to stick to a low cholesterol diet.

Tom: And do you follow his advice?

Nick: It's hard to stick to a diet with my busy schedule.

Tom: For your health, it is very important to get a balanced diet.

Nick: What is it?

Սննդակարգին առնչվող հարցերի քննարկում

Նիք: Ես ապրում եմ Ամերիկայում ավելի քան յոթ տարի, բայց դեռ չեմ հասկանում, թե ինչու են այդքան խոսում սննդակարգի՝ որպես զարգացող գիտության մասին:

Թոմ: Ամերիկացիներն ուզում են առողջ լինել: Բայց մեզինք շատերը պատկերացում չունեն սննդային խնդիրների մասին:

Նիք: Երբ ես տեսնում եմ իմ ընտանեկան բժշկին, նա խորհուրդ է տալիս ինձ հետևելու ցածր խոլեստերինով սննդակարգի:

Թոմ: Եվ դու հետևո՞ւմ ես նրա խորհրդին:

Նիք: Դժվար է սննդակարգ պահել՝ իմ զբաղվածությունը հաշվի առնելով:

Թոմ: Քո առողջության համար շատ կարևոր է ռացիոնալ/հավասարակշռված սննդակարգը:

Նիք: Դա ի՞նչ է:

Tom: You can get a balanced diet by including foods from the four main food groups. They are: the milk group (milk, cheese, yogurt), the meat group (meat, poultry, fish, eggs), the bread group (bread, cereals, noodle) and the vegetable and fruit group.

Nick: What about the nutritional value of canned vegetables that we buy in the supermarkets.

Tom: The nutritional difference depends on how vegetables are prepared, no matter they are bought fresh or canned.

Nick: Thank you for your valuable information. You could become a professional dietitian.

Թոմ: Դու կարող ես ռացիոնալ/հավասարակշռված սննդակարգ պահել, որն ընդգրկում է ուտելիքներ չորս հիմնական սննդային խմբերից: Դրանք են՝ կաթնային խումբ (կաթ, պանիր, յոգուրտ), մսային խումբ (միս, թռչնեղեն, ձուկ, ձու), հացային խումբ (հաց, շիլաներ, լապշա) և բանջարեղենային ու մրգային խումբ:

Նիք: Ի՞նչ կասեք պահածոյացված բանջարեղենի սննդային արժեքի մասին, որը մենք գնում ենք սուպերմարկետներում:

Թոմ: Սննդային տարբերությունը կախված է այն բանից, թե ինչպես է պատրաստված բանջարեղենը, և կապ չունի, դա թարմ էք գնում, թե պահածոյացված:

Նիք: Շնորհակալություն արժեքավոր տեղեկատվության համար: Դու կարող էիր պրոֆեսիոնալ սննդաբան դառնալ:

Questions for discussion

Հարցեր քննարկման համար

1. How often do you have a meal?
2. Have you ever tried any diets? Were they effective?
3. Have you ever consulted a dietitian?
4. Do you know your weight? What do you do to keep fit?
5. Do you eat vegetables every day?
6. What foods and drinks are considered unhealthy?
7. What bad habits do you have that are harmful for your health?
8. What are your tips of healthy lifestyle?
9. How do you deal with stress?
10. What do you do to keep healthy?

UNIT 7

Shopping

Գնումներ

Useful vocabulary

Names of Shops

Խանութների անվանումները

Supermarket – ինքնասպասարկման խանութ	stationery – գրենական պիտույքների խանութ
mall, department store – առևտրի կենտրոն, հանրախանութ	furniture goods – կահույքի խանութ
butcher's – մսի խանութ	bookshop – գրախանութ
baker's – հացի խանութ	leather wear – կաշվե իրեր
dairy – կաթնամթերքի խանութ	knit wear – տրիկոտաժ
grocer's – նպարեղենի խանութ	perfumery – օծանելիք
greengrocer's – մրգի և բանջարեղենի խանութ	household goods – տնտեսական ապրանքներ
fancy goods – գալանտերիա	counter – վաճառասեղան
jeweller's – ոսկերչական խանութ	department – բաժին
toyshop – խաղալիքների խանութ	cash-desk – դրամարկղ
fur shop – մորթեղենի խանութ	boutique – կրպակ

Names of Goods

Ապրանքների անվանումները

blouse – բլուզ կանացի	suit – կոստյում
skirt – կիսաշրջագգեստ	shorts – կարճ անդրավարտիք

dress – զգեստ	tie – փողկապ
shirt – վերնաշապիկ	belt – գոտի
overcoat – վերարկու	socks – գուլպա
raincoat – անձրևանոց	scarf – շարֆ, գլխաշոր
T-shirt – մարգաշապիկ	handkerchief – թաշկինակ
rubber – ռետին	towel – սրբիչ
ruler – քանոն	crayon – գունավոր մատիտ
iron – արդուկ	doll – տիկնիկ
mixer – հարիչ	washing-machine – լվացքի մեքենա
refrigerator – սառնարան	sewing-machine – կարի մեքենա
hair-drier – վարսահարդարիչ	meat-grinder – մսադաց
jewellery – ոսկեդեմ	kettle – թեյնիկ
ring – մատանի	chain – շղթա
bracelet – ապարանջան	earring – ականջօղ
diamond – ադամանդ	pearl – մարգարիտ
sofa – բազմոց	bed – մահճակալ
dressing-table – հարդասեղան	armchair – բազկաթոռ
cupboard – խոհանոցի պահարան	wardrobe – զգեստապահարան
coffee-table – սուրճի սեղան	
sideboard – սպասքապահարան	

Names of Foods

Ուտելիքների անվանումները

meat – միս	pork – խոզի միս
fish – ձուկ	beef – տավարի միս

chicken – հավ
lamb – գառան միս
mutton – ոչխարի միս
butter – կարագ
coffee – սուրճ
juice – հյութ
biscuit – չոր թխվածք
bun – բուլկի

veil – հորթի միս
bacon – խոզապուխտ
egg – ձու
cheese – պանիր
sausage – երշիկ
tea – թեյ
ice-cream – պաղպաղակ
jelly – դոնդոլ

a) At the Supermarket

Ann: Do you have the shopping list?

Sam: Yes, it's in my phone. I'll get a cart. We'll shop together. We need laundry detergent.

Ann: Is the big size too expensive?

Sam: Not at all. It makes sense to buy a big box of detergent, that is used for a longer period of time.

Ann: I'll mind this. What's the next on the shopping list?

Sam: Orange juice.

Սուպերմարկետում

Աննա: Ունե՞ս գնումների ցուցակ:

Սեմ: Այո՛, իմ հեռախոսի մեջ է: Ես սալյակ կվերցնեմ, մենք միասին գնումներ կկատարենք: Մենք լվացքի ախտահանող միջոցի կարիք ունենք:

Աննա: Մեծ չափսի տուփը շա՞տ թանկ է:

Սեմ: Բոլորովին: Խելամիտ է գնել մեծ տուփով ախտահանող միջոց, որն ավելի երկար ժամանակ է օգտագործվում:

Աննա: Ես դա հաշվի կառնեմ: Ո՞րն է հաջորդը գնումների ցուցակում:

Սեմ: Նարնջի հյութ:

Ann: There are a lot of various brands of them.

Sam: The store has its own brand. The quality is the same, but it's a bit cheaper.

Ann: What about apples?

Sam: They are in aisle 5.

Ann: How much are they?

Sam: 2 dollars a pound.

Ann: O.K. Let's go to the meat counter.

Sam: I think, we need a chicken and some veal.

Ann: Don't forget to look at the date of the label.

Sam: Let's see. The meat has too much fat on it.

Ann: This piece has too much bone.

Sam: This piece can be roasted. Take it.

Ann: O.K. What else do we need? Check the shopping list.

Sam: We need some butter, soar cream, eggs and milk.

Աննա: Շատ տարբեր ապրանքանիշեր կան:

Մեմ: Խանութն ունի իր սեփական ապրանքանիշը: Որակը նույնն է, բայց մի քիչ ավելի էժան է:

Աննա: Ի՞նչ կասես խնձորների մասին:

Մեմ: Դրանք 5-րդ շարքում են:

Աննա: Որքա՞ն արժեն դրանք:

Մեմ: Մեկ ֆունտը երկու դոլար է:

Աննա: Լավ, արի գնանք դեպի մսի վաճառասեղանը:

Մեմ: Կարծում եմ՝ մենք պիտի գնենք մեկ հավ և մի քիչ հորթի միս:

Աննա: Չմոռանաս նայել օգտագործման ժամկետը պիտակի վրա:

Մեմ: Արի տեսնենք: Միսը շատ յուղոտ է:

Աննա: Այս կտորն էլ շատ ոսկորոտ է:

Մեմ: Այս կտորը կարելի է տապակել, վերցրո՛ւ այն:

Աննա: Լավ: Էլ ի՞նչի կարիք ունենք: Ստուգի՛ր գնումների ցուցակը:

Մեմ: Մենք մի քիչ կարագի, թթվասերի, ձվի և կաթի կարիք ունենք:

Ann: Oh, I've run out of bread and coffee, too. Don't forget.

Sam: That's all we need. Let's go to the cash register.

Աննա: Օ՛, հացն ու սուրճն էլ են վերջացել, չմոռանաւ:

Սեմ: Ահա այն ամենը, ինչի կարիքն ունենք: Արի գնանք դրամարկղի մոտ:

Questions for discussion

Հարցեր քննարկման համար

1. Who does the grocery shopping in your family?
2. Is there a supermarket near your house?
3. Which are better – big supermarkets or small grocery stores?
4. Do you have a shopping list before doing shopping?
5. Do you like to do shopping alone or with your family members?
6. What kind of food do you like to buy most of all?
7. Can you always find the things you need in a supermarket?
8. Do you use a trolley while shopping in a supermarket?
9. What time of day do you like to shop?
10. Do you shop food online?

b) At the Bookshop

Passer-by A: Where is the nearest bookshop?

Passer-by B: It's a good way from here, you have to take a bus.

Passer-by A: Thanks. ...
(at the bookshop)

Գրախանութում

Անցորդ Ա: Որտե՞ղ է մոտակա գրախանութը:

Անցորդ Բ: Բավականին հեռու է. ստիպված եք ավտոբուս նստել:

Անցորդ Ա: Շնորհակալություն ... (գրախանութում)

Shopper: I'd like to look through the fiction section.

Shop-assistant: Here you are. What are you interested in?

Shopper: I'm interested in modern literature. What books do you have by modern Armenian authors?

Shop-assistant: We have many of them. Who's your favorite author?

Shopper: It makes no difference. Simply I prefer easy reading books. I like adventurous novels. I don't like historical novels. They are boring for me.

Shop-assistant: I see. You can take this one.

Shopper: Thanks. I'll take it. Besides that one I need an Armenian-English pocket dictionary.

Shop-assistant: We have. This book is in great demand now.

Shopper: I also need a reference book and a guide-

Գնորդ: Ես կցանկանայի նայել գեղարվեստական գրականության բաժինը:

Վաճառողուհի: Խնդրեմ: Ի՞նչն է Ձեզ հետաքրքրում:

Գնորդ: Ինձ հետաքրքրում է ժամանակակից գրականությունը: Ի՞նչ գրքեր ունեք ժամանակակից հայ հեղինակներից:

Վաճառողուհի: Շատ ունենք: Ո՞վ է Ձեր սիրելի հեղինակը:

Գնորդ: Տարբերություն չկա: Պարզապես ես նախընտրում եմ դյուրընթեռնելի գրքեր: Ես սիրում եմ արկածային վեպեր: Ես պատմավեպեր չեմ սիրում: Դրանք ձանձրալի են ինձ համար:

Վաճառողուհի: Հասկացա: Դուք կարող եք սա վերցնել:

Գնորդ: Շնորհակալություն: Ես դա կվերցնեմ: Բացի դրանից՝ ինձ պետք է հայերեն-անգլերեն փոքրիկ բառարան:

Վաճառողուհի: Ունենք: Այս գիրքը հիմա մեծ պահանջարկ ունի:

Գնորդ: Ինձ նաև հարկավոր են տեղեկատու և ուղեցույց:

book.

Shop-assistant: Here you are.

Shopper: Have you got books by American writers?

Shop-assistant: Yes, of course.

Shopper: Give me one, please. As you see, I spend much money on books. But I can do nothing. Reading is my hobby.

Վաճառողուհի: Խնդրեմ:

Գնորդ: Դուք ամերիկյան գրողների գրքեր ունե՞ք:

Վաճառողուհի: Այո՛, իհարկե:

Գնորդ: Տվե՛ք ինձ որևէ մեկը, խնդրում եմ: Ինչպես տեսնում եք, ես շատ գումար եմ ծախսում գրքերի վրա: Բայց ես ոչինչ չեմ կարող անել: Կարդալն իմ սիրած զբաղմունքն է:

Questions and topics for discussion

Հարցեր և թեմաներ քննարկման համար

1. What kind of books do you like to read?
2. Who is your favourite English or American writer?
3. Do you buy books or take them from the library?
4. Do you have a good library in your town (city)?
5. Speak about your favourite book.

c) At the Shopping Centre

Առևտրի կենտրոնում

At the Shoe Department

Կոշիկի բաժնում

Annie: Is there a shoe department in this shopping centre?

Անի: Այս առևտրի կենտրոնում կոշիկի բաժին կա՞:

Bob: Yes, of course. It is on the

Բոբ: Այո՛, իհարկե: Այն երկրորդ

second floor.

Annie: Show me those high-heeled shoes. Haven't you shoes with thinner heels?

Shop-assistant: No, we haven't.

Annie: The shoe hurts me, besides the shoe lace is broken.

Shop-assistant: What kind of shoes would you like?

